Azg Ազգ

12 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ԵՐԵՔՇԱԲԹԻ 26 (3920)

# Ներկայացված փաստարկները Տեր-Պետրոսյանի համար անհաղթահարելի խոչընդոտներ չեն

## *Որոշեց Սահմանադրական դատարանը*

ՆԱՆՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«2008 թվականի նախագահական ընտրություններում ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի ճանաչելու» Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումն էր երեկ Սահմանադրական դատարանը քննության առել:

Սահմանադրական դատարանում նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանին ներկայացնող **Ռուբեն Թորոսյանն** ու **Արսակ Զեյնալյանը** ըստ մեկ ժամ ներկայացրին իրենց հավաքագրած այն տվյալները, որոնք համարում են իրենց թեկնածուից անկախ դատաձոներով առաջացած անհաղթահարելի խոչընդոտներ: Որոնց այդ դիմումին Ռուբեն Թորոսյանը ներկայացրեց Լեւոն Տեր-Պետրոսյանի հարազատները լուսաբանելու «Հայլուր»-ի որդեգրած կարգը, այն է՝ «ահավոր ձեւով»: Այնուհետեւ նույն հաղորդման լուսաբանումը կոչվեց հակահարց, որի հաղթահարումն անհնար է՝ մյուս հեռուսաբնկերություններն էլ, բանախոսի կարծիքով, ուղղակիորեն կրկնօրինակում են Հանրայինի գործելակերպը, մինչդեռ թեկնածուի հակազդեցության միակ միջոցն այս դրսին այցելություններն են մարզերում, տեսակավարակների թոնարկումն ու տարածումը: Վերջինն էլ, Ռուբեն Թորոսյանի ներկայացրած տվյալներով, ուղեկցվում է բռնություններով սկսվառակ բաժանողների, շաբի ներկայացուցիչների հանդեմ: Հեռուստաթերում հաստկացված ժամն էլ անհամար է ազդեցություն ունենալու համար, ինչը արդեն խոչընդոտ է մյուս թեկնածուների համար նույնպես:

Տես էջ 2

# «Այս պահին մեր երկրները չեն պատերազմում», բայց սահմանը փակ է

ՀՀ արտգործնախարարությունից հաղորդում են, որ նախարար Վարդան Օսկանյանը մասնակցելով անվտանգության հաղթակայանության հարցերով Մյունխենի 44-րդ համաժողովին, Թուրքիայի վարչապետի ելույթից հետո մեկնաբանություններով է հանդես եկել: Ի գիտություն ընդունելով, որ Թուրքիայի վարչապետը հրաժարում է Թուրքիայի ժողովրդավարացման գործընթացով եւ իր երկրի ռազմավարական դերակատարությամբ խաղաղության եւ կայունության հաստատման գործում, Օսկանյանը ասաց. «Պրն վարչապետ, ինչպես Դուք գիտեք, այսօր սահմանը մեր երկու երկրների միջեւ փակ է Թուրքիայի կողմից: Մենք հաճախ բարձրացրել ենք այս հարցը՝ նշելով, որ մենք կցանկանայինք Թուրքիայի հետ ունենալ նորմալ հարաբերություններ: Սակայն մենք լսում էինք Ձեզ ցարզ եւ հստակ, երբ Դուք կրկնում էիք սահմանը փակ պահելու երկու հիմնական պատճառաբանությունները կամ պատվակները: Ձեր հնչեցրած պատճառներից առաջինը Հայաստանի Ներգրավվածությունն է ԼՂ հակամարտության մեջ, երկրորդը՝ Ցեղասպանության ճանաչմանը հետամուտ լինելը: Սակայն ԼՂ հակամարտությունն ընթանում է հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, իսկ Ցեղասպանության ճանաչումը մեր բարոյական, պատմական պարտականությունն է»: Օսկանյանը հարց է տվել, որ այս պահին մեր երկրները չեն պատերազմում, եւ պատերազմական իրավիճակում չգտնվելու պայմաններում, առյուծ այն պատճառները, որ մեզանից բերում եք, բավարար են արդարացնելու համար մեր երկու երկրների միջեւ սահմանների փակ լինելը: Օսկանյանը նշել է նաեւ, որ «Թուրքիան կարող է դառնալ բնական կամուրջ Կովկասի եւ ԵՄ-ի ու ՆԱՏՕ-ի միջեւ»: Հաղորդվում է, որ Թուրքիայի վարչապետը չի պատասխանել նախարար Օսկանյանի հարցերին, նա կրկնել է միայն պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկությունը, ասել է, թե 1915-ի կոտորածները պատմականորեն ապացուցված չեն՝ մի կողմից առաջարկելով պատմաբաններին ու հնագետներին ուսումնասիրել խնդիրը, մյուս կողմից՝ մերժել ընդունները, թե Ցեղասպանությունը թուրական մեկկոլքի մաս է:

# Դինքի գործով դատալսումը վերսկսվեց

Սամբուլի դատարանում սկսվել է «Ակոս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանության գործի 3-րդ դատալսումը: Հաղորդվում է, որ դատարանի առջեւ կկանգնեն 19 մեղադրյալներ, որոնցից 8-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Ինչպես հաղորդում է «Հյուրիեթ» օրաթերթը, Դինքի սպանության գործի դատալսմանը հետեւելու համար Սամբուլ է ժամանել Մարդու իրավունքների միջազգային Ֆեդերացիայի պատվիրակությունը: Կառույցի գլխավոր քարտուղարը հայտարարել է, որ «Դինքի սպանության գործի դատաքննությունը Թուրքիայի համար հնարություն է մարդու իրավունքների տեսանկյունից»:

# Վախճանվել է Թոմ Լանթոսը

Երկուշաբթի 80 տարեկան հասակում վախճանվել է ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Թոմ Լանթոսը: Դեմոկրատ Լանթոսը Կոնգրեսի սահրին պալատում ներկայացնում էր Կալիֆորնիայի նահանգը: Նա ծնունդով Հունգարիայից էր: Ծագումով հրեա Լանթոսը եղել էր հակաֆաշիստական դիմադրության շարքերում, համակենտրոնացման ճամբարից ազատվել խորհրդային զորքերի կողմից: ԱՄՆ էր ներգաղթել 1947 թվականին: Առաջին անգամ ԱՄՆ-ի Կոնգրեսում նա ընտրվել էր 1980 թվականին:

Հիշեցնենք, որ 2007 թվականի հոկտեմբերի 10-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության 106-րդ բանաձեւի քվեարկության ժամանակ կողմ քվեարկողների թվում էր նաեւ հանձնաժողովի նախագահ Թոմ Լանթոսը:

# Լեւոն Տեր-Պետրոսյանը Մոսկվայում

Ըստ մեր ունեցած տեղեկությունների, ՀՀ նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանը երեկ մեկնել է Մոսկվա, նրա հետ մեկնել է նաեւ գործարար Խաչատուր Սուքիասյանը: Թե ինչ նպատակով է առաջին նախագահը ընտրությունների թեժ պահին մեկնել Ռուսաստանի մայրաքաղաք, դեռեւս հայտնի չէ: «Ազգի» հարցին ի պատասխան, թե ովքե՞ն են արդյոք լուրերը, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկնել է Մոսկվա, վերջինիս շաբի մամուլի քարտուղար **Արման Մուսինյանը** հայտարարեց, որ ինքը չի մեկնաբանում այդ տեղեկատվությունը: Իմիջիայլոց, երեկ անջատված էին առաջին նախագահի նախընտրական շաբի հաղթական հեռախոսները: Ավելացնենք նաեւ, որ ըստ ՀՀՇ-ական աղբյուրների, նախատեսվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Եթե այս տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, ապա հետաքրքրական կլինի իմանալ, թե այդը ո՞նչ նախաձեռնությամբ է կայացել:

# Նորից սպառնալիքներ թեկնածուի հասցեին

Ելույթ ունենալով «Փաստաթուղթ» ակումբում ՀՀ նախագահի թեկնածու Արամ Հարությունյանը ասել է, որ իրեն է զանգահարել ոմն Վազգեն, ներկայացել է որպես ԱՍԱԼԱ-ի ներկայացուցիչ եւ սպառնացել, թե «վաս կվերջացնես»: Հարությունյանը հայտնել է, որ զանգահարել են գաղտնի համարից, սակայն համոզված է, որ կոնշի, թե ով է եղել զանգողը: Նախագահի թեկնածուն նշել է, որ ինքը շատերին է խանգարում, բայց ոչ մեկից չի վախենում:

# Գերմանաբնակ ՀՀ քաղաքացիները դժգոհ են

Գերմանիայում բնակվող Հայաստանի մի խումբ քաղաքացիներ նամակ են հղել ՀՀ արտգործնախարարությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին եւ ԵԱՀԿ-ին, իրենց դժգոհությունը եւ հիասթափությունն արտահայտելով ՀՀ ընտրական օրենսգրքում կատարած փոփոխությունների կապակցությամբ, ինչը նրանց զրկում է ընտրելու իրավունքից: «Այս փաստը մեր կողմից դիտարկվում է որպես ՀՀ բոլոր քաղաքացիների եւ սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքների ոտնահարում», ասված է նամակի մեջ:

# Իսլամական հեղափոխության տարեդարձը Երեւանում

Երեկ երեկոյան «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում ընդունելություն էր կազմակերպել Հայաստանում Իրանի դեսպանությունը, Իրանի Իսլամական հեղափոխության 29-րդ տարեդարձի առթիվ: Պետական, քաղաքական ու կրոնական դեմքերի, դիվանագետների, լրատվական ու մշակութային շրջանակների ներկայացուցիչների առաջ կարճ ելույթ ունեցավ Իրանի նորանշանակ դեսպան Սեյիդ Ալի Սաղաիյանը եւ պարզաբանեց ու անգլերեն արտահայտվեց հայ-իրանական, Հայաստան-Իրան հարաբերությունների, դրանց պատմական արմատների, տնտեսական զարգացող երկկողմ ծրագրերի եւ տարածաշրջանի համար դրանց օգտակարության մասին: Պրն դեսպանը բարեմաղթեց, որ Հայաստանում տեղի ունենալիք առաջիկա ընտրությունները կլինեն հոգուս երկրի կայունության եւ առավել զարգացման: Հայերեն եւ անգլերեն արտահայտվեց նաեւ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, որը բարձրորեն գնահատելով Հայաստան-Իրան հարաբերությունների ներկա մակարդակն ու հեռանկարները, հատկապես շեշտեց, որ երկու երկրների կապերը ոչ միայն պատմական, այլեւ բովանդակային առումով են խորը:

# «Երեւանում իրականացված ծրագրերում ակնհայտ էր վարչապետի մասնակցությունը»

## *Հավաստիացրեց Երեւանի քաղաքապետը*

Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով 2007-ին մայրաքաղաքում կատարված աշխատանքներին, մատնանշեց, որ ինչպես ծավալային, այնպես էլ ժամկետային առումներով այդ աշխատանքներում ակնհայտ էր վարչապետ Սերժ Սարգսյանի մասնակցությունը: Քաղաքապետի հավաստմամբ, նրա կողմից կար մշտական վերահսկողություն, մշտական պահանջ, եւ դրանով էր պայմանավորված նաեւ, որ ժամանակին հնարավոր եղավ ավարտել նախատեսված բոլոր աշխատանքները: Իսկ այս տարի նախատեսվող վերելակների, դպրոցների կաթսայատների նորոգման եւ բազմաթիվ տարածքներում բնակիչներին սեփականության վկայականների տրամադրման ծրագրերը նույնպես եղել են վարչապետի «նախաձեռնությունը, առաջարկը եւ հանձնարարականը»:

2003-2007 թթ. Երեւանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված բոլոր ծրագրերը կատարվել եւ ֆինանսավորվել են 100 տոկոսով: Մամուլի ասուլիսի սկզբում հայտնելով այս մասին, Երվանդ Զախարյանն ավելացրեց, որ այս տարի կավարտվեն բոլոր այն ծրագրերը, որոնք սկսվել են 2007-ին եւ պետք է ավարտվեն այս տարի: Կազմվել է նաեւ Երեւանի սոցիալ-տնտեսական զարգացման 2008-2012 թթ. ծրագիրը:

2008-ին նախատեսված խոշոր ծրագրերից քաղաքապետը հիշատակեց դպրոցների եւ մանկապարտեզների ջեռուցման ծրագիրը, որի համար հատկացվել է 1,7 մլրդ դրամ: Երեւանի բոլոր դպրոցներում լրիվ ջեռուցման ցանցի ստեղծման համար նախանշված 3 տարվա փոխարեն, Երվանդ Զախարյանի հավաստմամբ, աշխատանքները կավարտվեն 2,5 տարում:

4-րդ ասիաձանի վթարայնության տեսակետ բնակիչների խնդիրն այս տարի ամբողջությամբ կլուծվի: Նրանց համար նախատեսվում է կառուցել 2 նոր տեսակ եւ 2009-ին այլեւս չենք ունենա 4-րդ ասիաձանի վթարայնության տեսակետ:

Տես էջ 3

# Հավասարակշռվա՞ծ են ԶԼՄ-ները ընտրությունների շեմին

Որքանո՞վ են զանգվածային լրատվամիջոցները հավասարակշռված լուսաբանում այսօրվա իրականությունը, մասնավորապես նախընտրական շրջանում, երբ նախագահի թեկնածուները տարված են իրենց քարոզարշավներով: Երեկ «Ուրբաթ» ակումբում քննարկում-հանդիպմանը ներկա «Ազգ», «Հայք» եւ «Երկիր» պարբերականների գլխավոր խմբագիրները ներկայացրին իրենց կարծիքներն ու տեսակետները:

«Հայքի» գլխավոր խմբագիր **Վասակ Դարբինյանը** գտնում է, որ հավասարակշռության մասին խոսելը ցնծաղելի է: Ըստ նրա, քարոզչության անհավասար պայմաններ են ստեղծված իրենց թեկնածուի՝ Տեր-Պետրոսյանի համար:

«**Ազգի**» գլխավոր խմբագիր **Հակոբ Ավետիսյանի** կարծիքով, թերթերի մի մասը միանշանակ կերպով պաշտպանում է Սերժ Սարգսյանին, մյուսը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին: «Առանձին անտեսվում-կորսվում է մյուս թեկնածուների գործունեությունը՝ զրկելով ընթերցողին իրազեկվելու իրավունքից: Եթե ընթերցողը ունի փող՝ գնելու երկու-երեք թերթ, դրանով է կարողանում ընդհանուր կարծիք կազմել, միջին եզրակացության հանգել»:

«Թվեր են լուսաբանվում, որ Տեր-Պետրոսյանի քարոզարշավների լուսաբանումը ամենաբարձր տոկոսն է կազմում: Չկա խարխափոք լուսաբանման մոտեցում: Երկու թեկնածուներն էլ ըստ էության լուծում են մեկ խնդիր՝ լինել-չլինելու խնդիր: Եթե Սերժ Սարգսյանը լուծում է իր անձնական լինել-չլինելու խնդիրը՝ մտածելով, որ չդառնալով նախագահ՝ կանգնելու է շատ լուրջ պրոբլեմների առջեւ, ապա Տեր-Պետրոսյանը, որին մենք բացահայտ պատրաստում ենք եւ՝ «Հայքում», եւ՝ «Սարգում», լուծում է պետության լինել-չլինելիության խնդիրը», նշեց Վասակ Դարբինյանը:

«Ես ձեռնպահ մնամ այս կամ այն թեկնածուին որակումներ տալուց: «Երկիր»-ը լուսաբանում է մեկ թեկնածուի: Թերթի վրա գրված է, թե ովքեր են տերը, եւ նրա թեկնածուի մասին էլ լուսաբանվում է: Կասեմ, որ լրագրողական էթիկայի կանոնները կարելի է պահպանել՝ նաեւ չունենալով որեւէ թեկնածուի: Թերթեր կան, որ ընտրություններից առաջ գոյություն չունեն, իսկ ընտրությունների ժամանակ հանկարծ ի հայտ են գալիս: Կողջունեիմ դա, եթե այդ թերթերը շարունակեին ընտրություններից հետո էլ իրենց գործունեությունը», նկատեց Հակոբ Ավետիսյանը:

«6 տարի առաջ փակվեց «Ա1+» հեռուստաընկերությունը: Մենք կունենայինք բոլորովին այլ հեռուստաընկերություն, եթե «Ա1+»-ը գոյություն ունենար», ասում է «Հայքի» գլխավոր խմբագիրը: Սակայն չհամաձայնեց Հակոբ Ավետիսյանը եւ նշեց. «Կրկին նույն պատկերն էր լինելու: Հասարակությունը զրկված կլիներ ճիշտ եւ հավասարաչափ ինֆորմացիա ստանալու եղանակից»:

Հարցին, թե ժամանակը վերջապես քարոզչությունն է տարածում, թե՞ լրատվություն, Դարբինյանը այսպես պատասխանեց. «Ազատ ստեղծագործելու հնարավորություն է տրված իմ լրագրողին: Ինձ էլ որեւէ մեկը չի պարտադրում որեւէ բան: Թե որքանով է լուսաբանվում այս կամ այն թեկնածուն՝ դա էլ խմբագրի ճմահաճույքն է, որոշումը: «Տարեգիրք» այդ առումով պահպանել է դարդեմ, որպիսեւ մեր ժամանակը ուղղված չէ դեպի հասարակությունը: Այսօր ամենավաթար վիճակում գտնվում է հասարակությունը: Միակողմանի ինֆորմացիան ինֆորմացիա չէ, դրա համար էլ հասարակությունը զրկված է: Հասարակությունը տուժում է դրանից, եւ դա էլ ազդում է ընտրությունների վրա: Թերթեր կան, որ ընտրություններից առաջ գոյություն չունեն, իսկ ընտրությունների ժամանակ հանկարծ ի հայտ են գալիս: Կողջունեիմ դա, եթե այդ թերթերը շարունակեին ընտրություններից հետո էլ իրենց գործունեությունը», նկատեց Հակոբ Ավետիսյանը:

«Մանուկը հիվանդ է, եւ այդ հիվանդությունը նոր չէ, որ գոյություն ունի: Մեր հասարակությանը չտեղադրեմ, որպիսեւ մեր ժամանակը ուղղված չէ դեպի հասարակությունը: Այսօր ամենավաթար վիճակում գտնվում է հասարակությունը: Միակողմանի ինֆորմացիան ինֆորմացիա չէ, դրա համար էլ հասարակությունը զրկված է: Հասարակությունը տուժում է դրանից, եւ դա էլ ազդում է ընտրությունների վրա: Թերթեր կան, որ ընտրություններից առաջ գոյություն չունեն, իսկ ընտրությունների ժամանակ հանկարծ ի հայտ են գալիս: Կողջունեիմ դա, եթե այդ թերթերը շարունակեին ընտրություններից հետո էլ իրենց գործունեությունը», նկատեց Հակոբ Ավետիսյանը:

«6 տարի առաջ փակվեց «Ա1+» հեռուստաընկերությունը: Մենք կունենայինք բոլորովին այլ հեռուստաընկերություն, եթե «Ա1+»-ը գոյություն ունենար», ասում է «Հայքի» գլխավոր խմբագիրը: Սակայն չհամաձայնեց Հակոբ Ավետիսյանը եւ նշեց. «Կրկին նույն պատկերն էր լինելու: Հասարակությունը զրկված կլիներ ճիշտ եւ հավասարաչափ ինֆորմացիա ստանալու եղանակից»:

Հարցին, թե ժամանակը վերջապես քարոզչությունն է տարածում, թե՞ լրատվություն, Դարբինյանը այսպես պատասխանեց. «Ազատ ստեղծագործելու հնարավորություն է տրված իմ լրագրողին: Ինձ էլ որեւէ մեկը չի պարտադրում որեւէ բան: Թե որքանով է լուսաբանվում այս կամ այն թեկնածուն՝ դա էլ խմբագրի ճմահաճույքն է, որոշումը: «Տարեգիրք» այդ առումով պահպանել է

հավասարակշռությունը, իսկ «Հայքում» հասակ է կողմնորոշումը դեպի Տեր-Պետրոսյանը»:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Ներկայացված փաստարկները Տեր-Պետրոսյանի համար անհաղթահարելի խոչընդոտներ չեն

1-ին էջից

Արտակ Զեյնալյանն էլ, շարունակելով ներկայացնել տվյալները, տեղեկացրեց. «Տանք չենք խնայել, չենք զլացել խոչընդոտների հաղթահարման համար, կամ՝ ենք դրսեւորել, սակայն դրանք մնացել են անհաղթահարելի: Խոչընդոտներ վերացնելու մեխանիզմներն իմինն խոչընդոտներ են, անում ենք ամեն ինչ մեր երկիրը իրավական տեսնելու համար»: Իրենց թեկնածուի համար ստեղծված խոչընդոտների վերացման համար ըստ կարգի դիմել են վարչական դատարան, Կենտրոնական ընտրական հանձնաժողով եւ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահին, սակայն մնացել անարձագանք:

ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը ճշտեց, որ «Սահմանադրական դատարանի խնդիրը դիմումատուի ներկայացրած խոչընդոտների գնահատումն է, այդ խոչընդոտները անհաղթահարելի՞ են, թե՞ անհաղթահարելի չեն»: Այդուհետեւ դռնփակ նիստում դատարանը որոշում կայացնելու գնաց եւ երեկոյան հրապարակեց, որոշումը՝ «Դիմողի ներկայացրած փաստարկները՝ ՀՀ սահմանադրության 52 եւ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 75 հոդվածների իրավակարգավորման առարկայի շրջանակներում, 2008 թվականի ՀՀ նախագահի ընտրություններում ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար չեն կարող համարվել որպես անհաղթահարելի խոչընդոտներ»: Որոշումը վերջնական է եւ ուժի մեջ՝ հրապարակման պահից:

# Արդարադատության նախարարության շենքը երեկ դեռ ծխում էր

Փետրվարի 9-ին, ժամը 04.51-ին Երեւանի Կենտրոն հանձնմի ոստիկանության բաժին ահազանգ է տացվել, որ Վ. Սարգսյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության շենքի տանիքում հրդեհ է բռնկվել: Դեպքի վայր են մեկնել 18 մարտական հաշվարկ, 5 ավտոանդամտի եւ ջրատար մեքենաներ: Ոտքի են հանվել բոլոր փրկարար ջոկատները, հրդեհը մեկուսացվել է 10.10-ին: Նախնական տվյալներով, այրվել են շենքի տանիքը, 3-րդ եւ 4-րդ մասնաբ՝ 2-րդ հարկերը: Զոհեր եւ վիրավորներ չկան: Փետրվարի 11-ի կեսօրին կրկին հրդեհի օջախները սկսել են ծխալ: Դեպքի վայրում 4 ավտոանդամտների օգնությամբ հրեջ փրկարարները շարունակում էին հրդեհաշիջման աշխատանքները: Ամբողջությամբ փուլ է եկել շենքի տանիքը: Շենքի 1-ին հարկում տեղադրված 1 տասնյակ օբյեկտները նույնպես ավերվել են: Գոգի տարհանման աշխատանքները շարունակվում են, հրդեհի պատճառները դեռ պարզ չեն: ՀՀ արդարադատության նախարարը եւ աշխատակիցները ժամանակավորապես կգտադեցնեն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԾ) շենքը:

ՊԱՏՄՈՒՄԻ

ՄԱՐԻՈՆԵՍ ՄԻՍԿԱՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

# Բարեգործականը կազմակերպվում է Եվրոպայում

## *Երեւանում կբացվի Մելիոնյան կրթահամալիրը*

Փետրվարի 1-3-ը Բրյուսելի «Մետրոպոլ» հյուրանոցի ժողովասրահում տեղի ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության եւ ՀԲԸՄ Եվրոպական կառույցների համատեղ ժողովը, որն այստեղ որոշիչ դեր կունենա կազմակերպության գործունեության համար: Ինչպես հայտնի է, 2008-ից ստեղծվել է ՀԲԸՄ Եվրոպական խորհուրդ Ալեխի Գովչյանի գլխավորությամբ, որն զբաղվելու է Բարեգործականի եվրոպական մասնաճյուղերի աշխատանքների համակարգմամբ: Իր ողջույնի խոսքում ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը նշեց, որ այսպիսով նոր փուլ է սկսվում եւ ՀԲԸՄ Եվրոպայի խորհուրդը պետք է աշխատանքներ տանի միավորելու հին ու նոր սփյուռքը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին 15 տարիներին Եվրոպա են գաղթել տասնյակ հազարավոր հայաստանցիներ, որոնք իմնկակազմակերպվելու կարիք ունեն: ՀԲԸՄ նախագահը նաեւ փաստեց, որ մեծացել է ուծացման վտանգը, նոր գաղթածների 80 տոկոսը կորցնում է լեզուն, մեծ թիվ են կազմում խառը ամուսնությունները, շատերն այլեւս հայկական եկեղեցի չեն հաճախում: Կարեւորելով նորանկախ Հայաստանի դերը եւ հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր փուլը, պարոն Սեդրակյանը նշեց, որ Եվրոպան կարող է լավ կամուրջ լինել Արեւմուտքի եւ Հայաստանի միջեւ: Մյուս կողմից նա կարեւորեց նաեւ ռուսահայության դերը եւ Ռուսաստանում հայկական համայնքի ու Հայ առաքելական եկեղեցու ծավալած հայանպաստ գործունեությունը: ՀԲԸՄ նախագահն անդրադարձավ նաեւ հայաստանյան գործունեությանը, նշելով, որ Երեւանի Նորք թաղամասում Մելիոնյան կրթահամալիրի բացումը նոր որակ կհաղորդի սփյուռք-հայաստան երիտասարդական-կրթական կապերին: Մելիոնյան կրթահամալիրի ճարտարապետական նախագիծը ներկայացրեց ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Արիս Աթամյանը: Տպավորիչ այդ կառույցում, որ կլինի ժամանակակից գերհագեցած կրթական համալիր, տարեկան կուսանեն 400-600 երիտասարդներ սփյուռքի տարբեր գաղթօջախներից:

Եվրոպայի ՀԲԸՄ պատասխանատու Ալեխի Գովչյանը նույնպես կարեւորելով եվրոպահայ համայնքի միասնության դերը եւ մեջբերելով ֆրանսահայության միասնական աշխատանք տանելու փորձը, նշեց, որ նորաստեղծ կառույցը կնպաստի Եվրոպիության հետ հայաստանի կապերի զարգացմանը, նորաստեղծ համայնքների եւ նոր երիտասարդական կազմակերպությունների հետ կապերի ամրապնդմանն ու համատեղ ծրագրերի իրականացմանը: Ելույթներ ունեցան Բուլղարիայի, Իսպանիայի, Հոլանդիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Մակեդոնիայի, Ֆրանսիայի երիտասարդական կազմակերպությունների կամ երիտասարդ պրոֆեսիոնալների խմբերի ներկայացուցիչները: Կարեւորվեց նաեւ Փարիզի Նուբարյան գրադարանինստիտուտի դերը իբրեւ եվրոպական հեւազոտական կենտրոնի, որտեղ իրենց ուսումնասիրությունները կարող են կատարել երիտասարդ գիտնականները: Գրադարանի համակարգող Ռայմոնդ Գեորգյանի ելույթը նվիրված էր պատմությանն ու ներկա հնարավորություններին:

ՀԲԸՄ ժողովում քննարկվեցին նաեւ եվրոպական կառույցների հետ հարաբերությունները, վարեց Բրյուսելում ՀԲԸՄ ներկայացուցիչ Նիկոլա Դավիթյանը, որը տեղում պետք է համակարգի այդ աշխատանքը: Ուշադրավ էին հայագետ Բեռնար Քուլիի եւ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբիի ելույթները: Թալին Փափազյանն էլ ներկայացրեց ԵՄ-Հայաստան հարաբերությունների պատմությունը: ՀԲԸՄ համաժողովում ելույթ ունեցավ Բելգիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիթչյանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՏՅԱՆ

Բրյուսել-Պրահա

## ԸՆԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիրելի «Ազգ», Ձեր թերթի միջոցով ուզում եմ երախտագիտություն հայտնել «Էրեբունի» բժշկական կենտրոնի ակնաբուժական ծառայության դեկավար Վարազդատ Սեյրանյանին՝ կուր հաշմանդամիս կրկին այրի լույս պարգեւելու համար: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում նաեւ ՀՀ առողջապահության նախարար պրն Հ. Քուսկլյանին՝ անշահախնդիր ծառայային վերաբերմունքի, նախարարին վայել գործում միջամտության համար:

ՎԻԿՏՈՐԻԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կենսաթոշակառու

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ

Հասցեագրման մեր տարբերակները

Գրեք նամակ եւ հասցեագրեք
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թող 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒ ՄԵՏՊԻՆՅԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲՅԱՆ / հեռ 529221

Հասցեագրման (գրավոր) / հեռ 582960

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Գովազդ. ծառայություն / հեռ 582483

Շտապ գովազդ բաժանորդագրություն / հեռ 529353

Հասցեագրային տարածք
«Ազգ» թերթ

Թերթի նիստերի անբողջական թե մասնակի արտադրությունները տրպագիր ձեւերով միջոցով կամ ռադիոհեռուստատեսության առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի

Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում

Գ. տառով յուրաքանչյուր գրությունները գրախոսվում են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVETIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **ԸՆԹԱՑԻԿ**

# «Նրա մտքի ներքին ծալքերում դեռ շատ չբացահայտված գաղտնիքներ ու հայտնագործումներ կան...»

## *Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հանդիպումը Գյումրիում*

ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը կիրակի օրը նախընտրական այցով Շիրակի մարզում էր: Ջրառկայում եւ Մարալիկում ընտրողների հետ հանդիպումներից հետո նախընտրական հանդիպում-հանդեսավար տեղի ունեցավ Գյումրու Թատերական հրապարակում: Սա խաղաղում վերջին տարիների իրոք ամենաբազմամարդ հանդեսավարներից մեկն էր, որին Գյումրու ընտրողներից ու թեկնածուի հետ եկած մարդկանցից բացի մասնակցում էին նաեւ մարզի նախկին շրջաններից եկածներ:

Բացելով հավաքը, թեկնածուի նախընտրական շտաբի Շիրակի մարզային ղեկավարներ **Սուրեն Գրիգորյանը** նշեց, թե այս հանդիպումը ցույց է տալիս, որ ազգովին համախմբվելու եւ մեր ազգային արժեքները վերագտնելու, երկրում իշխող կեղծիքին ու թշվառությանը, անտարբերությանն ու ամենաթողությանը հաղթելու վճռակամությամբ: Հանդիպումը վարելու պարտականությունը տանձնած **Նիկոլ Փաշինյանն** ավելացրեց, թե այսօր Հայաստանում տեղի է ունենում ժողովրդական շարժման հաղթարշավը, եւ այս ուժի առաջ ոչ ոք չի կարող կանգնել, իսկ ապօրինություններ գործել փորձողներին Փաշինյանը կոչեցին Սովետաբեռնի գաղութ:

Գյումրեցի **Հասմիկ Ադամյանը** հավաքածներին խնդրեց զրնգուն ծափողջույններով իրեն օգնել՝ գյումրեցուն ու շիրակցուն վայել հյուրընկալությամբ ողջունելու Հայոց նորանկախ երկրի հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին «ու նրա հրաշալի խումբը զարդարող բոլոր-բոլորին»... «Մենք հիմոզված ենք,- դիմելով առաջին նախագահին՝ ասաց նա,- որ դուք սրեղանի եք դնելու մեր ամենագավոն վերին, օր օրի ահագնացող չափերի հասնող արտագաղթին»: Բոլոր թեկնածուների մեջ առանձնացնելով այս թեկնածուի «շեղ ու շեղոդից անհասականությունը՝ նաեւ որոնս բարոյական դեմք», տիկինը հանդգնություն հայտնեց, որ «նրա մտքի ներքին ծալքերում դեռ շատ չբացահայտված գաղտնիքներ ու հայտնագործումներ կան»... Այդպես ընթերցվեց 225 ազատամարտիկների հայտարարությունը ի պաշտպանություն Տեր-Պետրոսյանի:

**Մանուկակ Պետրոսյանը**, ինչպես իմն ասաց, չէր եկել խոսելու «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախկինում այստեղ ծավալած գործունեության մասին: Նա պատմեց, որ նախորդ օրը Երեւանի հանդիպումում յուրաքանչյուրը ինն իրեն եւ մյուսներին հանդգնում էր ասել, որ իրոք «ազգային ազատագրական շարժումը» (՞) այլեւս հետընթաց չունի, իրեն զանգել են Գյումրիից, հարցել են՝ ինչպես է, հետո ինքն է հարցել՝ իսկ Գյումրիում ինչպես է, պատասխանել են՝ «լիքը վախեցած են»: Ես չեմ հավատում դրան, ասաց նա, եւ արդյունքը այս հանդիպումն է: Ս. Պետրոսյանը հոետորներից միակն էր, որ հիշատակեց ցուրտ ու մութ տարիները, նշելով, թե դա եղել է օբյեկտիվ մի վիճակ, պատերազմող երկրի վիճակ... Հանդիպումում ելույթ ունեցան նաեւ ԵԿՄ Շիրակի մարզային կառույցի ղեկավար, գնդապետ Ստեփան Ղահրամանը («Մի՞թե սա էր այն երկիրը, որի մասին մտածում ու երազում էինք 88-ին»), Առամ Զ. Սարգսյանը («Եկ, որ ձեզ նայում եմ, տեսնում եմ, որ ոչ միայն հույս կա, այլեւ կա հավատ, կա համոզում, որ մենք արդեն իսկ հաղթել ենք»), Սեդրակ Ղեմիրճյանը («Ձեզ կոչ եմ անում ակտիվորեն մասնակցել ընտրություններին, չենթարկվել տարաբնույթ ճնշումների, դիմակել ձեր խղճի մտքի, դիմակել հանուն Հայաստանի ապագայի»):

Վերջում ելույթով հանդես եկավ նախագահի թեկնածու **Լեւոն Տեր-Պետրոսյանը**: Այս խաղաղի հետ, նկատեց նա, իրեն կարում են եւ ամենաերջանիկ, եւ ամենաողբերգական իրավիճակներ: Երջանիկը՝ 88-ի ազգային շարժման ցույցերի ու հանդիպումների, ողբերգականը՝ ավերիչ երկաշարժի հետ կապված իրողություններն են: Գյումրին գնահատելիս, առաջին նախագահի համար ամենաբնորոշ փաստերը երկուսն են: Մեկ՝ որ երբ երկրաշարժից օրեր հետո Գորբաչովը եկել էր Լենինական, այդ ավերակների վրա այդ սգավոր ժողովրդից մեկը վեր կացավ ու հարց տվեց Արցախի մասին: Եվ երկրորդ՝ այդման զոհեր տված, այդման սուգ տեսած այս ժողովուրդը չզլացավ նոր զոհեր տալ դարաբաղյան պատերազմի ընթացքում՝ փառաբանելով այդ պատերազմում, մանավանդ՝ Շուշիի գրավման ժամանակ:

«Ես շատ բան չեմ ասելու ձեզ,- շարունակեց նախագահի թեկնածուն,- իմ ընկերներն ասացին այն ամենը, ինչ բխում է այսօրվա իրադրությունից, ինչ դրված է յուրաքանչյուր հայ խաղաղացու հոգում եւ գիտակցության մեջ»: Լեւոն Տեր-Պետրոսյանի կարծիքով՝ մեր երկիրը կառավարվում է «օտար հոգու տեր», մեր ժողովրդի հոգսերին, ցավերին, խորհուրդներին անտեղյակ ու անհաղորդ մարդկանց կողմից, եւ խնդիրը վերջապես այս վիճակը, 10 տարի տեւած այս մղձավանջը դադարեցնելն է: «Տասը տարվա ընթացքում,- **առանց դրան նախորդող երջանին անդրադառնալու ասաց նախկին նախագահը**,- ձեզնից խլվեցին ձեր բոլոր սրբությունները, ձեր բոլոր հարգանքները...»: Խոսելով այսօր այդ ամենը ընտրություններով հետ բերելու հնարավորության մասին, թեկնածուն իր ընտրողներին ուրախացրեց այն հեռանկարով, որ «Մենք գալիս ենք իշխանության մեծ թիմով, հզոր թիմով, խաղաղական 16 կուսակցություններով, կարեւորագույն խաղաղական դեմքերով...»:

Ելույթի մնացած մասը հիմնականում վերաբերում էր Ռոբերտ Քոչարյանին ու Սերժ Սարգսյանին, ոչեսական մեղեմայի, իր ոմնդամբ, հանդգնած լինելուն եւ այլն:

...Երբ խոսք եղավ 88-ի հանդիպումների մասին, ակամա հիշեցիր, որ այդ հավաքների վերջում ունկնդիրներին հնարավորություն էր տրվում հարցեր տալու հոետորներին: Հիմա դա չկա եւ երեւի նաեւ դժվար է: Այլապես, թվում է, հենց Գյումրիում էլ նախկին նախագահին, նրա կողքին կանգնած Հրանտ Բագրատյանին, գուցե նաեւ այլոց հարց տալու բաներ կլինեին:

ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆ

# «Երեւանում իրականացված ծրագրերում ակնհայտ էր վարչապետի մասնակցությունը»

*1-ին էջից*

Եվս երեք 4-րդ ասիճանի վթարայնության հանդակացարանների խնդրի առնչությամբ ստեղծվել է հանձնաժողով, որի եզրակացության հիման վրա էլ առաջիկա 1-2 տարում կկարգավորվի այդ հանդակացարաններում բնակվողների հարցը նույնպես: Ինչ մնում է 3-րդ ասիճանի վթարայնության տեսքերին, արդա այս տարի կամրացվի 10 տեսք, որից հետո կմնա այդպիսի 54 տեսք:

Երեւանի կանաչ տարածքները այս տարի ծրագրվում է ավելացնել տուրջ 10 հա-ով, որից 60 հա-ն Շենգավիթում: Իսկ փողոցների նորոգման համար 2008-ի համար հատկացված գումարը կազմել է 2,4 մլրդ դրամ: Այդ գումարները մասնավորապես կուղղվեն «Այրարատ» կինոթատրոնի մոտ գտնվող հանգույցի շինարարությանը, Գեղարքունիքի մի մասի կառուցապատմանն ու Կողբուն-Ֆերացիի Ալեք Մանուկյան ճանապարհի կառուցմանը: Երվանդ Զախարյանը վստահեցրեց, որ այդ բոլոր ծրագրերը կավարտվեն այս տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին եւ մասնավորապես հոկտեմբերին ամբողջ վերանորոգված հոկտեմբերին ամբողջ մայրուղին՝ «Այրարատ» կինոթատրոնից մինչեւ Դավիթաշենի կամուրջը, պատրաստ կլինի:

Արգելանցք՝ փողոցի վրա, հավանաբար պանթեոնի հարեւանությամբ վերգետնյա անցում կկառուցվի: Քաղաքապետը տեղեկացրեց, որ այս տարի անդրադառնալու են բոլոր սառցեսնյա անցումներին եւ, որպեսզի դրանք օգտագործվեն, կառուցվելու են արգելապատնեշներ փողոցի երկայնքով:

Տրանսպորտի հարցի կարգավորման ուղղված լուրջ քայլ կլինի 150 նոր ավտոբուսների ներկրումը մասնավոր ձեռնարկատերերի կողմից: Կտեղադրվեն 83 կանգառասրահներ, 27 խաչմերուկներում կտեղադրվեն նոր լուսացույցներ:

Կառուցապատման ծրագրերի մասին խոսելով, քաղաքապետը տեղեկացրեց, որ անցյալ տարի այստեղ կատարվել են 22 մլրդ դրամի ներդրումներ, իսկ 2008-ին կատարվելիք կապիտալ ծախսերը կկազմեն 24 մլրդ դրամից ավելի: Սակայն մինչ այդ կվերականգնվեն իրացման գոտիների եւ այդպիսիք չհանդիսացող մի շարք տարածքների բնակիչների սեփականության իրավունքները եւ կտրվեն սեփականության վկայագրեր: Մասնավորապես, ըստ կառավարության սահմանած ժամանակացույցի, մինչեւ 2009-ի վարչը Գր. Լուսավորիչ եկեղեցուն, Տերյան-Պուշկին փողոցներին, Դեղատան-Սուրենյանց փողոցներին հարակից տարածքների, Կոնդի, Հոզեռնի, «Ֆիդելիտասնցի» եւ մի շարք այլ իրացման գոտիների բնակիչներին սեփականության իրավունքով կտրամադրվեն նրանց կողմից տարիներ օգտագործվող հողամասերն ու գոտին: Բացի այդ, կազմվել է մի շարք բաղամասերի հողահատկացումների ժամանակ զբաղեցրած տեսք-տիրույթների եւ հողամասերի իրավական հիմքերի ուսումնասիրման, դրանց հաշվառման, չափագրման եւ սեփականության իրավունքի ճանաչման ափսանքներն իրականացնելու ժամանակացույցը: Համաձայն վերջինիս, 2008-ի առաջին եռամսյակում այդ ափսանքները կկատարվեն Ավան եւ Նորք-Մարաշ համայնքներում գտնվող մի քանի տարածքներում, երկրորդ եռամսյակում՝ Կենտրոնում, երրորդում՝ Շենգավիթում, չորրորդում՝ Մալաթիա-Սեբաստիայում, 2009-ի առաջին եւ երկրորդ եռամսյակում՝ Էրեբունիում, երրորդում՝ Աջափնյակում, Դավիթաշենում, Արաբկիրում, չորրորդում՝ Քանաքեռ-Զեյթունում եւ Նուբարաշենում:

Եվ վերջապես սոցիալական կարեւոր նշանակություն ունեցող մեկ այլ ծրագրի՝ վերելակների նորոգման մասին: Ըստ Երվանդ Զախարյանի, Սերժ Սարգսյանի հանձնարարականով եւ կառավարության որոշմամբ Երեւան քաղաքի 2464 վերելակների նորոգման համար հատկացվել է 3 մլրդ դրամ: Անցած տարվա ընթացքում արդեն իսկ նորոգվել է 400 վերելակ: Քաղաքապետի հավաստմամբ, մինչեւ 2008-ի հոկտեմբերն ամբողջությամբ կնորոգվեն մնացած բոլոր վերելակները: Նորոգումից հետո պետք է ստեղծվի ծառայություն, որը կզբաղվի դրանց անվտանգ շահագործումն ապահովելով:

Ամփոփելով, Երվանդ Զախարյանը հավաստիացրեց, որ այս տարվա համար նախատեսված բոլոր ծրագրերը նույնպես ամբողջությամբ կկատարվեն:

Ա. Ս.

**ՕՐԱԿԱՐԳ**

# Այսօր

- Ժամը 9.30-ին Հանրապետական կուսակցության գրասենյակից մեկնում Արագածոտնի մարզ: Սերժ Սարգսյանը կանցկացնի նախընտրական հանդիպումներ:
- Ժամը 11.00-ին «Թեմելյան» կենտրոնում «Ազգային գիտակցություն» հիմնադրամի նախաձեռնությամբ տեղի կունենա գիտագործնական ճնշարկում «Հայաստանի քաղաքական եւ տնտեսական հնարավոր զարգացումները 2008-ի նախագահական ընտրություններից հետո» թեմայով:
- Ժամը 11.00-ին ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնի հյուրը կլինի ՀՀ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանը:
- Ժամը 13.00-ին «Փաստարկ» ակումբի հյուրը կլինի ՀՀ նախագահի թեկնածու Արմեն Մելիքյանը:
- Ժամը 13.00-ին Գերմանիայի դեսպանությունում կկազմակերպվի մամուլի ասուլիս:
- Ժամը 13.45-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մամուլի ասուլիսով հանդես կգա գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը:
- Ժամը 14.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրերն են «Այանս» քաղաքացիական նախաձեռնության փոխնախագահներ Գեւորգ Մելիքյանը եւ Կարեն Պետրոսյանը:
- Ժամը 16.00-ին Գյումրու «Առաս» հյուրանոցում տեղի կունենա հանդիպում Վազգեն Մանուկյանի հետ: Մեկնումը՝ 13.00-ին ԱԺՄ գրասենյակից:

# Քարոզը չպետք է շփոթել անձնական վիրավորանքների հետ

Քանի մոտենում է փետրվարի 19, այնքան մեր նախագահացուների կրքերն ավելի են բորբոքվում, արձանագրվում են մի շարք անցանկալի միջադեպեր: Օրեր առաջ խիստ տհաճ միջադեպ արձանագրվել էր Արարատի մարզում, Արտաշատ քաղաքում, որի ժամանակ թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի եւ փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանի կողմնակիցների միջեւ: Ինչն էր եղել պատճառը, փորձեցինք պարզաբանումներ ստանալ Արարատի մարզպետ **Ալիկ Մարգսյանից**: «Պատճառն այն է, ասաց նա, որ Երեւանից այցելած ընկերները, քաղաքական գործիչները մի հատարակ բան պետք է գիտակցեին, որ չի կարելի գնալ մի մարզ եւ այդ մարզի սովորույթներն ու մարդկանց չհարգելով, հարգի փոխարեն իրենց ելույթները կառուցեն անձնական վիրավորանքների առանցքի շուրջը: Նախ սկսվեց Նիկոլ Փաշինյանից, այնուհետեւ նույն ոգով շարունակեցին Առամ Զ. Սարգսյանը, Լ. Տեր-Պետրոսյանը, ովքեր տարբեր աստիճանի անունների ու մակդիրներով սկսեցին վիրավորել ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանին եւ տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանին: Ես կարծում եմ, որ այս ամենը շատ լավ ծրագրված ու կանխամտածված էր, քանի որ նրանք շատ լավ հաշվարկել էին, որ Հ. Աբրահամյանը շատ ընդունված ու հարգված է այս մարզում, մանավանդ ծնունդով էլ այս մարզից է, ուստի հավակնությունների մեջ կարող էին լինել նրա հարազատները, ընկերներն ու երկրպագները, ովքեր կիսակդրվեին նրանց վիրավորանքներին: Մի՞թե կարելի էր այդ փաստը հաշվի չառնել:

Ես դեմ չեմ, թող իրենց կարծիքը հայտնեին նրա կամ ուրիշի ափսանքային գործունեության վերաբերյալ, այլ ոչ թե խոսեին հատուկ տերմիններով եւ անձը վարկաբեկելով: Եվ ինչ եք կարծում, եթե մեկին իր հարազատ տան մեջ վիրավորում ես, ինչ տրամադրություն պետք է ստեղծվի տեղում. թեպեւ չեմ հերքում, որ այս տեսանկյունից նրանց ձեռագիրը շատ ծանանչելի է, բայց ինչ էլ լինի, չափի զգացումը, կարծում եմ, ճիշտ է, առավել եւս այն դեպքում, երբ ես ինքս այդ օրը առավոտյան զգուշացրել էի նրանց կուսակցության ղեկավարներին, որ ինչ ուզում են, ում մասին ուզում են, թող խոսեն, բայց առանց վիրավորական բառերի: Եվ ինչ սացվեց, դա ոչ թե միտինգ էր, այլ ուղղակի չափն անցած մի ելույթ՝ ուղղված Հովիկ Աբրահամյանին, ինչին էլ հակադրվել էին արտաշատցիները: Եվ ամբողջ քաղաքացի ոգեւորեցի եղել է այն, որ արտաշատցի տղաները պատասխանել էին այն կանանց, որոնց վրա հարձակվել էին Տեր-Պետրոսյանի թիմակիցները, երբ այդ կանայք հորդորել էին միտինգավորներին, որ եթե եկել եք քարոզ անելու, անձերի մի վիրավորեք, խոսեք ձեր ծրագրերի մասին:

Արտաշատցին թույլ չի տա, որ գան, իրենց կանանց ծեծեն ու գնան: Եվ այդ ինչպես հասկանանք, որ այդ նույն մարդիկ ուրիշ տարածքներում մեծ զգուշավորությամբ են իրենց պահում, իսկ այս տարածքում իրենց թվում է, ինչ ուզեն, կանեն, սխալվում եք:

**- Պ. Մարգսյան, իսկ ո՞րն էր պատճառը, որ դուք իջաք հարթակ:**

- Ես ոչ թե ինքս իջա, այլ ինձ հրավիրեցին: Ինձ մոտ բարձրացավ Սմբատ Այվազյանը եւ հրավիրեց ինձ ներեւ՝ ասելով, որ քարոզարշավի ընթացքը գնալով ագրեսիվանում է: Այլընտրանք չկար. ես իջա ներեւ եւ հորդորեցի ժողովրդին, որ իրեն հանգիստ պահի, եւ չտրվի սադրանքների: Եվ այդ պահին Լ. Տեր-Պետրոսյանը ինձ տեսնելով, բաց լթողեց առիթը ինձ եւս վիրավորելու՝ մատնանշելով որպես խուլիգանի:

**- Շիակադրեցի՞ Նրան:**

- Իմ բարոյականությունն ու պատասխանատվության զգացումս թույլ չտվեցին այդիսի իջնել, չնայած իրենք այդ վարքագծով խայտառակեցին իրենց եւ մեծ սխալ թույլ տվեցին: Ես վստահ եմ, որ ինձ խուլիգան ասողը բարոյական մեծ վնաս կրեց: Իրենք չէ, որ մեկին պետք է գնահատական տան, ասեմ ավելին, Արարատի մարզը միշտ էլ համախմբված ու հաստատուն է եղել եւ հիմա էլ նույն հաստատությամբ ու վճռականությամբ կատարելու է իր ճիշտ ընտրությունը:

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ԱՄՓՈՓՈՒՄ

# Նախընտրական խոհեր

Շուրջ մեկ շաբաթ է մեզ բաժանում հանրաքվեության նախագահի ընտրություններից: Նախագահ ընտրվելը, անտարակույս, շատ մեծ պատիվ է, սակայն դա ամենևին էլ լոկ արտոնություն չէ, այլ մեծ պարտականություն: Ես ընդամենը ՀՀ հաղթացի եմ, ոչ կուսակցական, եւ փորձում եմ նախագահի թեկնածուների բավական հարուստ ներկայացակից ընտրել, իմ կարծիքով, ամենից արժանավորին: Բոլորովին այն կարծիքը չտեղնվի, թե ես այժմ իմ կարծիքը փորձում եմ պարտադրել ընթերցողներին: Ամենևին: Ես ընդամենը արտահայտում եմ իմ կարծիքը: Երկար-բարակ ծանր ու թեթեւ անելուց հետո զգում եմ, որ նախագահի թեկնածությունների մեջ ամենահարմար ներկայիս վարչապետ Սերժ Սարգսյանն է: Իմ հազվագյուտ զրույցների- արդյունքում ես համոզվել եմ, որ հանձին նախկին պաշտպանության նախարարի եւ այսօրվա վարչապետի մենք ունենք իրոք թեսական մտածողություն ունեցող քաղաքական գործիչ, որին երկրի նախագահությունը վստահելը արդարացված է եւ անհրաժեշտ: Միայն նրա ջանքերի շնորհիվ է, որ այսօր ափսանմենք են տարվում երորդ սերնդի առաջացուցիչ կառուցելու ուղղությամբ: Օրակարգում է երկրորդ ատոմային էլեկտրակայանի կառուցման հարցը: Նա է, որ իր նպաստակադիր եւ հետեւողական քաղաքականությամբ, ինչպես դժվար չէ տեսնել, ասիճանաբար հանրաթեսության շուրջ է համախմբում մերձավոր եւ հեռավոր հայկական սփյուռքի գործարար մարդկանց, ինչը անտարակույս կնպաստի կամիտալ ներդրումների մեծացմանը մեր հանրաթեսությունում: Այս ամենն ինձ իրոք մտածել է տալիս, որ ժողովուրդը՝ ներկայիս վարչապետ Սերժ Սարգսյանին ընտրելով հանրաթեսության նախագահ, էլեարկում է հոգուս Հայաստանի Հանրաթեսության հետագա զարգացման ու վերելքի, ի պատմություն մեր երկրում բարեկեցիկ ու սոցիալապես ապահով հասարակության: Իհարկե, այս ամենը չի կարող ստեղծվել կախարդական փայտիկի մի շարժումով: Եվ ժողովրդի բարեկեցությունը չի կարող կտրուկ թռիչք կատարել, երբ այսօրվա քաղաքական իրադրությունը պահանջում է մեզանից հսկայական ծախսումներ անել մարտունակ եւ ուժեղ բանակ պահելու համար: Այլ խոսքով, ես չեմ հավատում եւ բավարար հիմքեր ունեմ չհավատալու, որ ժողովրդի կենսամակարդակը ոչ մի դեպքում այնպիսի ցնցող աճ չի գրանցի, ինչպես խոսանում են նախագահի որոշ թեկնածուներ: Ես ուզում եմ հուսալ, որ ժողովուրդը ճիշտ ընտրություն կկատարի եւ մեր հանրաթեսության վարչապետ Սերժ Սարգսյանը առաջիկա տարիներին կգրադեցնի ՀՀ նախագահի պատասխանը:

Սակայն ես կամենում եմ իմ մտահոգությունները ներկայացնել նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին:

Ինձ խորապես անհանգստացնում է այն իրողությունը, որ մեծաշնորհային կարիտալը մեր երկրում թույլ չի տալիս զարգանալու փոքր եւ միջին բիզնեսը: Հաճախարհային փորձը վկայում ցույց է տվել, որ չկա բարեկեցիկ հասարակություն, եթե նրա որնաբարը չի լինելու փոքր եւ միջին բիզնեսը: Հետեւաբար նորընտիր նախագահի առաջին խնդիրներից մեկը պետք է լինի, բազմիցս խոսացված, սակայն գործնականում սաղմնային վիճակի մեջ գտնվող փոքր ու միջին բիզնեսի ձեւավորումը եւ օրենքի պաշտպանության ներո առնելը:

Ինձ եւ շատ շատերին հուզում է մեր արդյունաբերության ներկա կացությունը: Իրողություն է, որ մեր արդյունաբերական արտադրանքի 31.2 տոկոսը կազմում է թանկարժեք քարերի մշակումը: Այս առնչությամբ կամենում եմ նախագահի մեր թեկնածուի ուշադրությունը հրավիրել մի այնպիսի կարեւոր խնդրի վրա, ինչպիսին է դոլարի արհեստական արժեզրկումը: Նման թե ինչպես պիտի գիտության ոլորտ ոտք դրած երիտասարդն ընտանիք կազմի, բնակարան ձեռք բերի եւ իր ու ընտանիքի գոյությունը պահպանի: Իսկ արդյունքն առավել քան հստակ է: Եթե բանակի տարկետման խնդիրը չլինի, արդա մենք չենք ունենա ներկայիս ասպիրանտների նշանակալից, եթե չասենք գերակշիռ մասը: Կարելի է SOS ինչեցնել: Գիտությունը ծանր կացության մեջ է: Պետք է օգնել նրան դուրս գալու այդ վիճակից եւ ոչ թե մտածել, թե ինչպես «ազատվել» գիտության մի այնպիսի կառույցից, ինչպիսին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան է: Խնդիրը կառույցի մեջ չէ, այլ՝ այն բանական աշխատեցնելու:

Իսկ ինչ տեսանք վերջերս՝ կապված թեմատիկ ֆինանսավորման հետ: Պարզ ասենք, որ թեմատիկ ֆինանսավորման կրճատումը, եթե փորձ չի արվել մեծացնելու բազային ֆինանսավորումը, հղի է ծանր հետեւանքներով: Թող պետությունը նպաստակային ծրագրեր ներկայացնի գիտահետազոտական ինստիտուտներին, գիտնականները ծրագրեր ներկայացնեն թեմատիկ ֆինանսավորման համար, սակայն գիտության հիմնական առաջնդիքը եղել եւ մնում է բազային ֆինանսավորումը:

Ինչեւէ, վիճակն առավել քան պարզ է եւ այն պետք է շտկել: Ցնայած գիտությունը բավարար ու պատշաճ արտացոլում չի գտել նաեւ նախագահի իմ նախընտրելի թեկնածու Սերժ Սարգսյանի ծրագրում, այնուամենայնիվ, ես գտնում եմ, որ նա այսօր քաղաքական դաշտում միակն է, որ կարող է դրությունը շտկել եւ գիտությանը վերադարձնել իր արժանավոր տեղը մեր հասարակության մեջ: Մեր ապագան գիտության համակողմանի զարգացումն է եւ ոչ թե օտար երկրների գիտական հասատությունները մեր երիտասարդ եւ ունակ կադրերով համալրելը:

Ավարտելով խոսքս, կամենում եմ որոշ պատմաբան հիշեցնել, որ մեր երկրառակությունների պատճառով մենք հանիցս կորցրել ենք մեր թեականությունը: Դարեր պահանջվեցին, մինչեւ ծնունդ առավ Հայաստանի առաջին Հանրաթեությունը, տասնամյակներ՝ մինչեւ ստեղծվեց Հայաստանի մեր այսօրվա Հանրաթեությունը: Եկեք աչքի լույսի պես պահպանենք, որպեսզի գլոբալիզացիայի այս դարում մենք կարող ենք հարվածի տակ դնել այն, իսկ նոր հնարավորություն՝ այս արագ փոփոխվող աշխարհում պատմությունը կարող է եւ մեզ չընծեռել: Վերջապես, այսօր մենք ունենք մի այնպիսի կարեւոր խնդիր, ինչպիսին արցախյան հիմնահարցի իրավական կարգավորումն է: Ես բնավ չեմ ասում լուծումը: Գործնականում լուծված է, սակայն կարիք ունի իրավական կարգավորման: Մենք՝ հայերս պետք է հասկանանք, որ մեզ համար ամեն մի ցնցում, քաղաքական ամեն մի անհավասարակշռություն հղի է ծանր, կորեանարար հետեւանքներով: Արցախյան խնդիրը մեզ համար անհնազանդելի է դարձնում հասարակության բոլոր ուժերի միասնական կամքի դրսեւորումը, մի բառնցք դառնալը՝ անկախ կուսակցական պատկանելությունից, իշխանական կամ ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչ լինելուց:

**ԲԱԲԿԵՆ ՏԵՐՈՒՆՅԱՆ,**
**ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ**

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Երկխոսության փորձը՝ իրականություն

2007-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը (ՈՒԿԶՀ) «Եվրասիա» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացրեց «Աջակցություն հայ-թուրքական միջսահմանային երկխոսությանը եվրոինտեգրման գործընթացի համատեքստում. մտորում ենք տարածաշրջանի երիտասարդները» ծրագիրը:

Հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանի խաղաղության, անվտանգության եւ տնտեսական զարգացման համար, բխում է երկու ժողովուրդների, ինչպես նաեւ տարածաշրջանի մյուս երկրների շահերից:

Այսօր Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ գոյություն չունեն դիվանագիտական հարաբերություններ: Սակայն ենք միայն ոչ պատշաճական շփումներ հասարակության որոշ շերտերի միջեւ: Այսպիսի շփումներն անհրաժեշտ են եւ նպաստում են երկու երկրների ժողովուրդների միջեւ հարաբերությունների ձեւավորմանը:

Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների երիտասարդ ներկայացուցիչների շարունակական երկխոսության ծավալմանը: Երկխոսությանը նպաստելու համար ծրագիրն առավել շեշտադրումներ էր կատարել երկու ժողովուրդների ընդհանրություններին, քան հայտնի հակասություններին: Որոշս երկուստեղ հետաքրքրություն ներկայացնող հնարավոր ընդհանրություն ընտրվել էր եվրոպական ինտեգրացիայի թեման. Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է եւ ընդգրկված է Եվրոմիության «Նոր հարեւանության քաղաքականության» մեջ, Թուրքիան նույնպես անդամակցում է Եվրոպայի խորհրդին եւ Եվրոմիության անդամության թեկնածու երկիր է:

Սեպտեմբերին ծրագրի շրջանակներում Սամբուլում, Անկարայում եւ Երեւանում անցկացվեցին հարցախույզներ հասարակության տարբեր շերտերի շրջանում՝ պարզելու նրանց վերաբերմունքը հարեւան երկրի նկատմամբ եւ կարծիքն առ այն, թե եվրոպական ինտեգրացիան որքանով կնպաստի երկու պետությունների միջեւ հարաբերությունների բարելավմանը եւ հասարակությունների մերձեցմանը: Հոկտեմբերին Սամբուլում անցկացվեց սեմինար հայ եւ թուրք երիտասարդների, ինչպես նաեւ երկու երկրների՝ եվրոինտեգրման հարցերով փորձագետների մասնակցությամբ: Փորձագետները մասնակիցներին ներկայացրին եվրոինտեգրման ուղղությամբ երկու երկրների ներկա գործընթացը: Սեմինարի ընթացքում ցուցադրվեցին վերոնշյալ հարցախույզների տեսագրությունները, եւ քննարկում ծավալվեց: Մասնակիցներն այնտեղ համատեղ աշխատանքի արդյունքում գաղափարներ ներկայացրին մոտ ապագայում շփումները շարունակելու եւ ընդլայնելու վերաբերյալ:

Դեկտեմբերին Հայաստանում նկարահանվեց եւ հեռարձակվեց հեռուստատեսային թոք-շոու հայ եւ թուրք փորձագետների, երիտասարդների մասնակցությամբ: Հեռուստահաղորդումը կհեռարձակվի նաեւ Թուրքիայում, ինչպես նաեւ ծրագրի վերաբերյալ հոդված կտպագրվի թուրքական թերթում:

Ծրագիրն իրականացնելիս ՈՒԿԶՀ-ին օժանդակում էր գործընկեր թուրքական «Մարմարա դասավանդողների ընկերակցություն» հասարակական կազմակերպությունը:

Ծրագրին մասնակից երկու երկրների երիտասարդները եւ փորձագետները տրավորված էին երկխոսության արդյունքներից: Նրանց ձեռնարկած փորձն արդեն իրականություն էր, ուստի պատրաստակամություն հայտնեցին փոխադարձ շփումները դարձնելու շարունակական:

**«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ,**
**Ծրագրի իրականացման պատասխանատու**

ՀՈՅՍՅԷ ՊՐՍԲԹ

# Երեւանի խանութներում գները գրեթե մոսկովյան են

Ի տարբերություն Ռուսաստանի Պետդումայի նախագահ Բորիս Գրիզլովի հայաստանյան այցի, որը գրեթե վիրեց Ռուսաստանի ՁԼՄ-ների աչքից, վարչապետ Վիկտոր Զուբկովին Սոչիից Երեւան հրավիրելը լայնորեն լուսաբանվեց եւ մանրամասնվեց, եւ հեռուստատեսությամբ: Հայտնի է, որ Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը «լուրջ» կարիք ունի ռուսաց քաղաքական վերնախավում եւ անխոհեմություն կլիներ դրանք չօգտագործել նախագահական ընտրությունների շեմին: Եվ այս «տրավորիչ» պարագան այստեղ էլ ոչ ոք չի փորձում թաքցնել: Ընդհակառակը, փիրավ հույս է հայտնվում, որ «ռուս-հայկական հարաբերությունները բոլոր ասպարեզներում «նոր» նախագահի օրոք էլ կշարունակեն դինամիկ զարգանալ:

Բոլորն ընդունում են Զուբկովի այն համոզմունքը, որ ռուսական բիզնեսի «միլիարդ դոլարի» ներկայությունը Հայաստանում իրոք սահման չէ:

Սակայն քաղաքատնտեսական ընդհանուր առմամբ բացահայտ «օլիմպիական» (նախընտրական) այս ժեստերի մեջ այստեղ ուշադրություն է հրավիրվում նաեւ Ռուսաստանում առկա մոտ երկու միլիոնանոց հայկական ներկայության վրա, որն, անշուշտ, ի տրե ողջունում է երկու երկրների նման մերձեցումը եւ իր ունեցած միջոցներով նպաստում է այդ գործընթացին: Բնավ էլ «պատահականորեն» չի նշվում նաեւ այն փաստը, որ եթե Ռուսաստանը Հայաստանի էկոնոմիկայում ներդրել է հիբյալ մեկ միլիարդ դոլարը, արդա ռուսահայությունն ամեն տարի իր նախնյաց երկիր է փոխանցում նույն գումարի կանխիկ փող: Գուցե դա է պատճառը, որ երեւանում 218 դոլար միջին աշխատավարձի դեպքում գները խանութներում գրեթե մոսկովյան են, «ինքնաթիռից» նկատում է թերթերից մեկը...

**ՌՈՒԲԵՆ ՀԵՍՐԱՊԵՏՅԱՆ,**
**Մոսկվա**

ԱՄՆ

# Օբամային կարելի է վստահել

***Այս կարծիքին է Օնտարիոյից (Կանադա) դոկտ. Տիգրան Աբրահամյանը, որի հոդվածը թարգմանաբար ներկայացնում ենք ստորև:***

Մ. Նահանգների հետ ափխարհն էլ նոր սկզբի ականատես է դառնալու նոյեմբերին, երբ ամերիկացիները նոր նախագահ ընտրեն: Ներկա դրությամբ դա կարող է լինել Ամերիկայի պատմության մեջ առաջին կին կամ աֆրոամերիկացի նախագահը: Հետեւանքներն անկասկած տարբեր կարող են լինել, բայց վստահ կարելի է ասել, որ դրանք կաղ չեն ունենա ընտվողի սեռի կամ մաշկի գույնի հետ:

Բարաք Օբաման եւ Հիլարի Քլինթոնն, իրենց խոստումների համաձայն, երկրում իրականացնելու են բարեփոխումներ, որոնք անդայման ազդելու են բավական երկար ժամանակ անկայունության մատնված եւ մարդային անձեղ կյանքեր խլած Մերձավոր Արեւելքի ափխարհաքաղաքականության վրա: Երկուսն էլ խելամտություն եւ առողջ դատողություն են բերելու իսկային, որն իրեն ափխարհի միակ տիրակալն է զգում: Աղետները, զոհվածներն ու անբարենպաստ պայմաններում հայտնվածները վերջապես հնարավորություն են ունենալու շունչ քաշելու իրենց վիճակը, շահարկությունների առիթ դարձած անօրինական ներգաղթի օրենքը հավասարապես վերանայվի:

Երկու թեկնածուների քարոզարշավում տեղ գտած նմանություններ կողքին առկա են նաեւ տեսակետների սկզբունքային տարբերություններ, որոնց միջ են ուշադրություն դարձրել ցարդ: Չնայած Օբամայի մարդասիրական կեցվածքն ու հասարակական կյանքում բազմազգ կորպորացիաների եւ քարոզչական խմբավորումների միջամտության ենթադատությունները լուսաբանվել են բավականաչափ, Քլինթոնի հին ու նոր եւ միաժամանակ բարդ կապերը պետական կառույցների տարբեր ենթաբաժինների հետ մնացել են սպվերում: Բայց չէ՞ որ շատ բան է կախված այն հանգամանքից, թե ովքեր են ֆինանսավորում ընտրարշավները:

Օբամայի ընտրած ուղին դեռի առագան նայելն է: Եվ հենց այս պատճառով է, որ Քերոլայն Քենեդին գրել էր. «Ոչ մի ուրիշ նախագահ ինձ այդքան չէր ոգեւորել, որքան հայրս (Ջ. Ֆ. Քենեդին) էր ժամանակին ոգեւորել մարդկանց: Հիմա, առաջին անգամ, ես տեսնում եմ այդ մարդուն, որը կարող է դառնալ մեր նախագահը, ոչ միայն իմը, այլեւ ամերիկացիների մի ամբողջ նոր սերնդի նախագահը»:

Երկու թեկնածուներն էլ անդրադարձել են մեր ժամանակների խնդիրներին՝ միջուկային զենքի տարածում, ահաբեկչություն, կլիմայական փոփոխություն, աղքատություն, հիվանդություններ եւ այլն: Սակայն Օբաման էր, որ առավել արտացայտորեն եւ ուժգնությամբ խոսեց Ցեղասպանության հարցի մասին: Դա նշանակում է, որ նա իսկապես մտահոգված է եւ սոսկ արդի ծառայություն չի մատուցում էվենթ ձեռք բերելու նպատակով: Սամանթա Փաուերի խոսքերը ճիշտ են գնահատում նրան: Հայ համայնքին ուղղված իր խոսքերում նա ընդգծեց Օբամայի «հստակ կեցվածքը Հայոց ցեղասպանության հանդեպ, նրա անհողդողդ ջանքերը Սենատում, բանաձեւի անցկացման առնչությամբ, նրա ցանկությունը նախագահի ընտրվելու դեպքում հիշատակելու եւ իրեն իրենց անունները կոչելու հանգամանքները»:

Իսկ որտե՞ղ է կանգնած Քլինթոնն այս հարցում: Ճիշտ է, Օբամայի նման նա էլ է պատրաստում բանաձեւի անցկացումը եւ խոսանում է ընտրվելու դեպքում հիշատակել ու ճանաչել Ցեղասպանությունը: Բայց չմոռանանք, որ նրա ամուսինն էլ էր խոսացել, իսկ հետագայում խոչընդոտել դրա ընդունմանը Կոնգրեսում:

Թեկնածուներին շրջապատող մարդիկ երբեմն ավելի կարեւոր են եւ ավելին են ասում, քան նրանց խոսքերը: Երբ Քլինթոնն Այովայում արտասանում էր իր ճառը, կողքին կանգնած էր Մադլեն Օլբրայթը, որն ուրիշ պետքարտուղարների նման ժամանակին դեմ էր դուրս եկել Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունմանը:

Թերթերի հաղորդումներին հավասար միշտ չի լինում, բայց երբեմն պետք է արժանին մատուցել: Այդ առումով նշեմ հետեւյալը. թուրքական «Միլիեթից» արտատպելով հունվարի 28-ին «Նոր Մարմարա» հայկական թերթը գրում է, որ Մեհմետ Չելեբի անունով մի թուրք Քլինթոնի խորհրդատուներից մեկն է: Փորձելով վստահեցնել թուրքերին, որ Քլինթոնյան ճամբարից իրենց վտանգ չի սպառնում, նա պարզաբանել է, որ Հիլարի Քլինթոնի «աջակցությունը Ցեղասպանության հարցում պարզապես նախընտրական մարտավարություն է»: Նա նշել է. «Կալիֆոռնիայում 1,5 մլն հայեր են ապրում, իսկ այդ նահանգը էլեկտորատի 28 տոկոսն է կազմում, ուստի նա ստիպված է այդ քայլին դիմելու, քանի որ այնտեղ հարթակ տանողը կիսաթի նաեւ նախագահական վերջնական ընտրություններում»:

Ամերիկահայերի մասնակցությունը այդ ընտրություններին մեծամասն կախված է այն հանգամանքից, որ նրանք ցանկանում են նախագահական աթոռին տեսնել Ռոնալդ Ռեյգանի նման մեկին, որը ժամանակին հրապարակայնորեն ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը: Դրա համար բարոյական հատկանիշներ են անհրաժեշտ: Իսկ այդպիսի հատկանիշներ կարելի է գտնել մի անձնավորության մեջ, որի ոչ վաղ անցյալը լի է եղել զրկանքներով եւ մարդու իրավունքների խախտումներով:

Այդ անձնավորությունը Օբաման է:

Թարգմ. Հ. ԾՈՌԼԻԿՅԱՆԻ

# Իսրայելը համաձայն է կիսել Երուսաղեմը

Պաղեստինյան աղբյուրները հաղորդում են, որ վերջին շաբաթներին գաղտնի բանակցություններ են վարվում Իսրայելի եւ Պաղեստինյան ինքնավարության վարչակազմի միջեւ: Բանակցությունների թեման Երուսաղեմի կարգավիճակի հարցն է: Պաղեստինյան պատվիրակությունը գլխավորում է ինքնավարության նախկին վարչապետ Ահմեդ Կուրեյին, իսրայելականը՝ արտգործնախարար Ցիպի Լիվնին:

«Ցերուսալեմ փոստ» թերթի կայքէջը նշում է, որ Ցիպի Լիվնիի ափխարհակազմը հրաժարվում է մեկնաբանել գաղտնի բանակցությունների վերաբերյալ պաղեստինցիների տարածած հաղորդագրությունը:

Ըստ պաղեստինյան աղբյուրների, կողմերին հաջողվել է համաձայնության հասնել Երուսաղեմի կարգավիճակին առնչվող կարեւոր հարցերում: «Այսօր կարող ենք ասել, որ Իսրայելը պատրաստ է հեռանալ մայրաքաղաքի փաստորեն բոլոր արաբական թաղամասերից: Իսրայելը պատրաստ է կիսել Երուսաղեմը, եւ դա մեր գլխավոր ձեռքբերումն է», գրում է թերթի կայքէջը, վկայակոչելով Ռամալլայի բարձրաստիճան պատասխանատուի:

Միաժամանակ նշվում է, որ Պաղեստինի վարչակազմը մեծ հույսեր է կապում Վաշինգտոնի հետ: Մահմուդ Աբբասի մարդիկ ակնկալում են, որ բանակցություններում հերթական ճեղքումը տեղի կունենա ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի տարածաշրջան կատարելիք այցի ընթացքում:

Ահմեդ Կուրեյին Վաշինգտոնին խնդրում է Իսրայելի վրա ճնշում գործադրել, որպեսզի նա կատարի գործադրել, որպեսզի նա կատարի «ճանապարհային քարտեզ» իր ըստ «ճանապարհային քարտեզի» իր ստանձնած պարտավորությունները: Դա վերաբերում է «Կանաչ գծից» դուրս շինարարության դադարեցմանը, Երուսաղեմում ՊԱԿ-ի բոլոր նը, Երուսաղեմում ՊԱԿ-ի բոլոր նը, Երուսաղեմում ՊԱԿ-ի բոլոր ն

# Ռուս-հայկական դարավոր բարեկամությունը նոր ֆիլմում

«Հայաստանի հետ բարեկամության եւ համագործակցության ռուսաստանյան ընկերակցությունը» (նախագահ՝ Վիկտոր Կրիվոդուսկով) ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ ստեղծել է անդրանիկ «Ռուսաստան-Հայաստան, թեւ հեռու, բայց միասին» վավերագրական ֆիլմը: Փետրվարի 9-ին «Մոսկվա» կինոթատրոնում կայացավ ֆիլմի ցուցադրությունը: Այն առաջինն է հետխորհրդային ժամանակահատվածի հայ-ռուսական հարաբերությունների անցյալի եւ ներկայի մասին: Ցուցադրությունից առաջ Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Ռուբեն Գեւորգյանը ներկայացրեց Վիկտոր Կրիվոդուսկովին ու նշեց, «Դեռ Ղարաբաղի պատերազմի ժամանակ շատ էր գալիս Հայաստան, Ղարաբաղ եւ շատ էլ պատմությանում էր մեր շահերը: Սա առաջին ֆիլմը լինելով, հույս ունեմ, որ մի շարք ֆիլմերի սկիզբ կդնի, որի հիմքում կլինի հայ-ռուսական հարաբերությունների մասին մենաբանությունը: Չնայած որ հիմա այդ հարաբերությունները որոշ ճեղք են տվել: Սիա հենց նման ֆիլմը եւ դրա հեղինակներն են, որ իրենց գործով փակում են այդ ճեղքերը»: Վիկտոր Կրիվոդուսկովը նշեց. «Ինֆորմացիոն բլոկադան հարկավոր է ճանդել եւ դրա շուրջ աղում են շատ շատ դարեր: Այս ֆիլմը, որը կցուցադրվի ՌԴ-ի 17 տարածաշրջաններում ոչ միայն հայերի, այլեւ շատ ռուսների աչքերը կբացի»: ՌԴ-ի 47.000 դպրոցներին կուղարկվի այս ֆիլմը, որպես ուսումնական մեթոդական նյութ:

Ֆիլմի ցուցադրությունից հետո Դավիթ Մուրադյանը իր կարծիքը հայտնեց. «Կարծում եմ, որ նախ եւ առաջ ռուսական դիտարանի եւ լսարանի համար օգտակար ֆիլմ է, որը աղել է ժուռնալիստիկայի եւ հեռուստատեսային ժանրով, որը կարող է ռուսաստանցի նոր սերնդին մոտեցնել Հայաստանին: Ֆիլմը նկարահանված է բավականաչափ վարպետորեն եւ ամենակարեւորը՝ սիրով»:

Ֆիլմում ներկայացված են երկու ժողովուրդների հայտնի դեմքեր, գրողներ, արվեստագետներ, դեկավարներ, որոնք հստակ նշում են, որ երկու ժողովուրդների թե՛ տնտեսական, թե՛ մշակութային եւ թե՛ հոգեւոր կյանքը շաղկապված են դարեր ի վեր եւ գնալով դրանք ավելի ամրանում են: Ֆիլմի սցենարի հեղինակն է Անդրեյ Գավրիլովը, ռեժիսորը՝ մեր հայրենակից Վազգեն Չատինյանը: Ֆիլմի ստեղծման եւ հայ-ռուսական բարեկամությանն ու համագործակցությանը նվիրված նախագծի հեղինակներն են Վ. Կրիվոդուսկովը եւ «ԱԵ-ՏԲ» ռուսաստանյան հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Յակով Կալլերը: Ֆիլմն արդեն ցուցադրվում է ռուսական հեռուստաալիքներով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԻՔԱԵԼՅԱՆ

# Հայտնի դարշան ազգային երաժշտական մրցանակի հաղթողները

Հանրային հեռուստատեսության եւ ՀՀ մշակույթի նախարարության ամենամյա «Ազգային երաժշտության մրցանակաբաշխություն-2007» մրցանակների հանձնումը կայացավ փետրվարի 10-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում: Թվով հինգերորդ այդ մրցույթում, որի դուրին կազմված է եղել 7 տարբեր խմբերից՝ երաժիշտներ, լրագրողներ, երգահաններ, հեռուստատեսության աշխատակիցներ, ընտրել են 16 անվանակարգում եւ 4 հատուկ մրցույթների հաղթողներին, որոնց էլ հանձնվեց տարվա մրցանակը: Այսպիսով, տարվա «Հայտնություն» դասական երաժշտության ոլորտում մրցանակը շնորհվեց «Հայաստանի երիտասարդական նվագախմբին» (գեղ. ղեկ.՝ Սերգեյ Սմբատյան), «Լավագույն փուլի խումբ»՝ «Ամենոիդս», «Լավագույն ազգագրական համույթ»՝ «Ակունք», «Լավագույն հայտնություն»՝ Վարդան Բաղայան, «Լավագույն ջազ նախագիծ»՝ «Հայաստանի թեատրոն ջազ-բենդի համերգային նախագիծը», «Լավագույն դասական նախագիծ»՝ Կամերային նվագախմբի Արցախում կայացած համերգը (գեղ. ղեկ.՝ Առամ Ղարաբեկյան): «Տարվա լավագույն փուլ ալբոմ» է ճանաչվել Հայկոյի «Մի խոսքով» ձայնասկավառակը, «Լավագույն ժողովրդական ալբոմ»՝ Անանա Մայիլյանի «Էքսնովոկալ» ալբոմը: «Լավագույն հիթը» բաժին հասավ Սոֆի Մխեյանին՝ «Օրը եւ գիշերը» երգի համար, «Լավագույն տեսահոլովակը»՝ ռեժիսոր Հրաչ Քեչիչյանին՝ Էմմի եւ Սուրեր Սաֆոյի՝ «Եթե դու գնաս» երգի տեսահոլովակի համար: Տ. Նաղդալյանի անվան մրցանակը շնորհվեց Հայկոյին՝ «Մի վախեցիր» ֆիլմի համար գրված երաժշտության համար:

Բացի այդ, հատուկ մրցանակների արժանացան «Տարվա թայմ» հաղորդման համար Ամեն Թուքունջյանը (Ֆիկո), «Շառ» ընկերությունը՝ Հայոց բանակի կազմավորման 15-ամյակին նվիրված համերգի համար, «Շանթ» հեռուստաընկերությունը՝ «Ժողովրդական երգիչ» նախագծի եւ ժողովրդական երգի զարգացման համար, «Երեւանի պետական երիտասարդական նվագախումբը» Բեռլինում ունեցած համերգի համար: Տարվա լավագույն՝ «Արսեն Գրիգորյան» անվանակարգում ներկայացված հինգ թեկնածուներից հաղթող ճանաչվեց վեցերորդը՝ բժիշկ Արսեն Գրիգորյանը, որը շատ սիրում է իր անվանակիցներին:

Ռադիոսարքերում ունեցած ավանդի, հայկական երաժշտության պրոպագանդման ու տարածման համար «Տարվա հատուկ մրցանակը» հետեւում շնորհվեց Սերգակ Դավիդյանին (դիջեյ Սերգակ): Տարվա ժողովրդական երգիչ» մրցանակը շնորհվեց Արսեն Գրիգորյանին (Մրո), «Լավագույն ժողովրդական երգչուհի»՝ Անանա Մայիլյանին: Տարվա լավագույն երգիչը դարձավ Արամեն, իսկ երգչուհին՝ Սիրուհը: Մ. Մ.

# Լեդի Գիանային լազերո՞վ են սպանել

Մեծ Բրիտանիայում վերսին ենթադրություններ են սկսվել իշխանուհի Դիանայի մահվան հանգամանքների կապակցությամբ: 1997-ի օգոստոսի 31-ին ողբերգությունը տեղի էր ունեցել Փարիզում այն ժամանակ, երբ նրա եւ Դոդիի «Մերսեդես» ավտոմեքենան բախվել էր կամրջի հենասյուներից մեկին:

Վաղուց է խոսվում այն մասին, որ ավտոթարը պատահականություն չի եղել: Լեդի Դիանայի եւ Դոդիի մահվան մեջ ամենից հաճախ մեղադրում են Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայություններին (իբր նրանք Դիանային սպանել են, որպեսզի գահաժառանգ Չարլզից ամուսնալուծվելուց հետո երկրորդ անգամ չամուսնանա):

Բայց այժմ ի հայտ է եկել հիշյալ չարաբաստիկ օրվա իրադարձությունների զարգացման նոր վարկած: Լոնդոնի «Դեյլի Թելեգրաֆ» թերթի տեղեկությունների համաձայն, Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայությունները ավտոթարը առաջացրել են լազերային ճառագայթի միջոցով: Պարզվում է, կան ականատեսներ, որոնք նկատել են, թե ինչպես ավտոթարից մի քանի վայրկյան առաջ «Մերսեդեսի» առջեւից շարժվող մոտոցիկլիստը ինչ-որ ճառագայթ է ուղղել ավտոմեքենայի վարորդի աչքերին: Դրա հետեւանքով վարորդը կորցրել է մեքենան կառավարելու հնարավորությունը: Ավելին, թերթը հավաստիացնում է, որ նման լազերային սարք գոյություն է ունեցել դեռ 90-ական թթ. սկզբներին եւ առաջին անգամ օգտագործվել է 1993-ին Հարավսլավիայի նախկին ղեկավար Սլոբոդան Միլոսեւիչի դեմ ահաբեկչության նախապատրաստման ժամանակ:

Պ. Ք.



# Նիկողայոս Ադոնցի աշխատությունը վերահրատարակվել է անգլերեն

Հայկական հարցի, մասնավորապես Սեւրի պայմանագրի վերաբերյալ առաջին վերլուծություններից մեկը պատկանում է ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին:

1920 թվականի աprիլից բնակվելով Լոնդոնում, հենց նույն տարվա հունվարի 20-ին, այսինքն՝ Սեւրի պայմանագրից 2 ամիս անց, նա անգլերեն հրատարակում է «Towards the solution of the Armenian question» («Հայկական հարցի լուծման ուղղ») գրքույկը, որում բացի «Հայկական հարցը Սեւրում» ուսումնասիրությունից զետեղվում են դեռեւս 1918-ին Պետրոգրադում գրված «Հայկական հարցի պատմական հիմքը եւ Թուրքիայի անկումը», ինչպես նաեւ «Թուրքիայի անդամահատումը» հոդվածները:

Այս գրքույկը 1984 թվականին թարգմանվել է ռուսերեն, որից հետո՝ 1989-ին եւ 1996-ին լույս է տեսել հայերեն, սակայն անգլերեն բնագիրն առ այսօր համարվում է ամենաընթերցվողը: Դրա նշանակությունը եւ արժեքը գնահատելով, ԳԱ արեւելագիտության ինստիտուտը՝ մեկենասությամբ Արմեն եւ Քերսաբե Ճերեճյան հիմնադրամի (Մ.Նահանգներ), 2007 թվականին վերահրատարակեց այն՝ դոկտոր Պետրոս Հովհաննիսյանի եւ ակադեմիկոս Նիկոլայ Հովհաննիսյանի ներածական խոսքով:

Ռ. Պ.

# Անգլուհի Էմի Ուայնհաուսը 5 «Գրեմմի» ստացավ

## Մրցանակներ ստացան նաեւ Քաշմեսը եւ Օրտմանը

Լոս Անջելեսում ավարտվեց երաժշտական ամենահեղինակավոր մրցանակներից մեկի՝ «Գրեմմիի» հանձնման արարողությունը: Ջայնագրության ամերիկյան ակադեմիան 5 «Գրեմմի» շնորհեց բրիտանացի երգչուհի Էմի Ուայնհաուսին: Երգչուհին ոսկե գրամոֆոններ ստացավ որպես «Լավագույն Երգի» հեղինակ, «Լավագույն ձայնագրության» համար եւ որպես «Լավագույն նոր կատարող», ինչպես նաեւ «Պոփ-երաժշտություն անվանակարգում՝ «Վերադարձ սեփին» ալբոմի եւ «Rehab» երգի համար, որոնք ժանրում լավագույնները ճանաչվեցին:

Իսկ Ուայնհաուսի պրոդյուսեր Մարկ Ռոնսոնը ճանաչվեց «Տարվա պրոդյուսեր»: Ի դեպ, ինքը՝ Ուայնհաուսը, ներկա չէր մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությանը:

«Տարվա ալբոմ» ճանաչվեց Ջերի Ֆենկոկի «River: The Joni Letters» սկավառակը:

Մրցանակների թվով այս տարի 2-րդ տեղում է ռեպ երգիչ Կանյե Ուեսթը՝ 4 «Գրեմմի»:

«Գրեմմիի» մրցանակաբաշխությունն այս տարի տեղի էր ունենում 50-րդ անգամ: Մրցանակներ շնորհվեցին ամենատարբեր անվանակարգերում: Երաժիշտների, երգիչների, կոմպոզիտորների ստեղծագործությունները գնահատում էր 20 հազարանոց ժյուրին:

Այս անգամ բեմի վրա էին պրոդ երաժշտության թագուհի Թինա Թերները եւ երիտասարդ ասոր Բյոնսին: Մրցանակներ շնորհվեցին 31 կարգերի 110 անվանակարգերում: եվ եթե Ամերիկան եւ Մեծ Բրիտանիան ստացան բազմաթիվ մրցանակներ պրոդ եւ ռեպ երաժշտության համար, ապա Ռուսաստանն այդի էր ընկնում չինացող դասական երաժշտության ներկայացուցիչներով: Անանա Նետրեբկոն այդի ընկավ դասական վոկալի ասպարեզում, Վալերի Գերգիեւը հանդես էր գալիս Մարիինյան թատրոնի նվագախմբի հետ, Յուրի Բաշմեթը՝ «Մոսկվայի մեծակատարներ» նվագախմբի հետ:

Այսպիսով Յուրի Բաշմեթը ներկայումս ամենանշանավոր երաժիշտներից մեկն է ափխարհում: Նետրեբկոն եւ Գերգիեւը, սակայն, ոսկե գրամոֆոն չստացան: Լավագույն դասական վոկալի համար մրցանակը հետեւաբար շնորհվեց Լորեյն Հանթ Լիբերմանին:

Հայտնի երգչուհի Շերը մի անգամ կատակով ասել է, որ նախագահները երգի մրցույթում երբեմն ավելի հաջող են հանդես գալիս, քան դաղափարական բանավեճերում: Այս տարվա մրցույթն էլ բացառություն չէր: ԱՄՆ նախագահության թեկնածու թեկնածու, Իլինոյսի սենատոր Բարաք Օբաման գեղագանցեց նախկին նախագահ Բիլ Քլինթոնին: Օբաման ոսկե գրամոֆոն ստացավ «Հույսի խոսքեր. խոհեր ամերիկյան երազի վերստեղծման ուղղությամբ» սկավառակի համար, որը ճանաչվեց լավագույն ձայնագրված պատմություն:

Պ. Ք.

# Հ. Բաղալյանի անվան երաժշտական հիմնադրամ

## Կրթաթոշակի դիմումներն ուղարկել մինչեւ մայիսի 1-ը

Հարդարակման խնդրանքով խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Ուրբերբաունի (Մասաչուսետս) Հովհաննես Բաղալյանի անվան երաժշտական հիմնադրամը դիմումներ է ընդունում առաջիկա 2008-2009 ակադեմիական տարվա համար: Դիմումների վերջնաժամկետն է 2008-ի մայիսի 1-ը:

Երաժշտական կրթաթոշակ ստանալ ցանկացողները պետք է դիմեն հետեւյալ հասցեով HBMF, P. O. Box 733, Watertown, MA 02471 (USA), լրացուցիչ տեղեկությունների համար այցելել «www.Amarasonline.com» (էջը բացելուց հետո ձախակողմյան մենյուից ընտրել Hovannes Badalian Music Fund-ը) կամ «hbmf.info@yahoo.com» կայքերը:

Ավելացնենք, որ հիմնադրամը հիմնվել է Ուրբերբաունի Ամարաս Սոֆեսի Դաշնության կողմից ի հիշատակ փոված երգչի, եւ թոշակներ է տրամադրում ափխարհի տարբեր ծայրերից հայկական երաժշտությունը ուսումնասիրողներին: 2006 եւ 2007 թվերին հիմնադրամը տարեկան 2000 դոլար է հատկացրել Հայաստանից, Արցախից եւ Բելգիայից (Մասաչուսետս) ընտրյալ երեխաների եւ դասատուների համար: Նույն չափի գումար նաեւ նախատեսված է այս տարեշրջանի համար, որն սկսվելու է 2008-ի սեպտեմբերի 1-ին:

Դրամահավաքի նպատակով Ամարասը մայիսի 31-ին Բրոսնոնի Ցոն Հանկոտ դահլիճում կազմակերպել է գալա-համերգ, նվիրված երեխաների պատասխանատվության միջազգային օրվան:

Հ. Ք.

# Վարդան Խոջոյանը մոսկովյան մրցաշարի հաղթող

Մոսկվայում ավարտվեց «Սերֆլոտի» շախմատային փառատոնը, որին ընդհանուր առմամբ մասնակցեցին 1200 շախմատիստներ: «Բ» խմբի մրցաշարում ոչ-արգաղոս գերազանց արդյունքի հասավ Վարդան Խոջոյանը՝ վստահորեն գրավելով առաջին տեղը: Վարդանը դեռևս մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ էր իր համար ապահովել առաջին տեղը: Նա 8 տուրից հետո հարյուր տոկոսանոց արդյունքով վստահորեն գլխավորում էր մրցաշարային աղյուսակը: Նման բան շախմատային մրցաշարերում հազվադեպ է պատահում: Խոջոյանը 7-8-րդ տուրերում էլ շարունակեց հաղթարշավը՝ պարտության մատնելով Ալեխանդր Չեռնյաեւին եւ Սերգեյ Կորոչենկոյին: Ավարտական տուրում նա սպիտակներով մրցում էր իր հայրենակից Տիգրան Գասպարյանի հետ, որը 7 միավորով Օլեգ Օլոյվի հետ 2-3-րդ տեղերն էր բաժանում: Մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի:

Այսպիսով, 9 հնարավորից 8,5 միավորով Վարդան Խոջոյանը դարձավ «Բ» խմբի մրցաշարի հաղթող՝ արժանանալով 150 հազար ռուբլու: ՖԻՌԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովն էլ նրան հանձնեց հուշագավաթը: 8 միավորով արձաթե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Օլեգ Օլոյվը: 6 շախմատիստ, որոնց թվում էր եւ Տիգրան Գասպարյանը, վաստակել էին 7,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով մրցանակային 3-րդ տեղը զբաղեցրեց ռուսաստանցի Սերգեյ Կորոչենկոն: Նշենք, որ մինչեւ 30-րդ տեղը զբաղեցրած շախմատիստներն արժանացան դրամական տարբեր չափի մրցանակների: Տիգրան Գասպարյանը լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 4-րդ տեղը: Մրցաշարի մեր մյուս մասնակիցներից Վահագն Խաչատրյանը (27-րդ տեղ) եւ Արթուր Դաւադյանը (30-րդ) վաստակեցին 6,5-ական միավոր: Նրանցից կեսական միավոր պակաս վաստակեցին Վարդան Մելոնյանը (46-րդ տեղ), Դմիտրի Հարությունյանը (55-րդ տեղ) եւ Տիգրան Սիմոնյանը (68-րդ տեղ): Առնոլդ Մինասյանը (79-րդ) եւ Սարգիս Սարգսյանը (90-րդ) իրենց օգտին 5,5-ական միավոր գրանցեցին, իսկ Մարկ Բասենկյանը 4 միավորով զբաղեցրեց 279-րդ տեղը:

Ցավոք, մյուս երկու մրցաշարերում մեր շախմատիստներին չհաջողվեց նույնիսկ մրցանակակիր դառնալ: Ուժեղագույնների խմբում հանդես եկած հայաստանցի 9 շախմատիստներից լավագույն արդյունքը ցույց տվեց Կարեն Ասրյանը, որը 6 միավորով զբաղեցրեց 30-րդ տեղը: Ավարտական տուրում նա պարտվեց Մուրազ Կազգալեեւին, այլապես հաղթանակի դեպքում կարող էր մրցանակակիր դառնալ: Ավարտական տուրն անհաջող էր նաեւ Վլադիմիր Հակոբյանի համար, որը զիջելով Անտոն Կոռոբովին, 5,5 միավորով զբաղեցրեց 63-րդ տեղը: Նույնքան միավոր ունեցող Դավիթ Քալաջյանը 80-րդն է, Հրանտ Մելոնյանը՝ 81-րդը: 5-ական միավոր վաստակեցին Զավեն Անդրեասյանը (90-րդ տեղ), Ռոբերտ Հովհաննիսյանը (114-րդ տեղ) եւ Արսաշես Մինասյանը (118-րդ): Յուրի Համբարձումյանը 3 միավորով 243-րդ տեղում է, իսկ Աղասի Իշանցը 2,5 միավորով զբաղեցրեց 275-րդ հորիզոնականը:

Ուժեղագույնների մրցաշարում հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Արսյոմ Տիմոֆեեւը: Ավարտական տուրում նա հաղթեց Էռնեստ Ինարկիեւին եւ վաստակեց 7,5 միավոր: Նա պարգեւատրվեց կես մլն ռուբլով: 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրները որոշվեցին լրացուցիչ գործակիցներով: Այդ բախտին արժանացան 7-ական միավոր վաստակած ռուսաստանցի գրոսմայստերներ Ալեխանդր Ռյազանցեւը եւ Սերգեյ Վոլկովը:

Կանանց մրցաշարում Հայաստանը ներկայացնող մեր միակ մասնակից Էլինա Դանիելյանը հաղթելով Սվետլանա Վասիլկովային, վաստակեց 6,5 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 10-րդ տեղը: 11-րդ հորիզոնականում է նույնքան միավոր վաստակած Կարինա Համբարձումովան, որը եւս հաղթանակով ավարտեց Տատյանա Մալգինայի հետ ավարտական պարտիան: Ռուսաստանը ներկայացնող մյուս հայազգի շախմատիստուհի Տաթեւիկ Հայրապետյանը 5,5 միավորով 33-րդ տեղում է: Լիբանանահայ Քնարիկ Մուտաֆյանը 4,5 միավորով 63-րդ հորիզոնականում է: Իսկ ռուսաստանցի Մարինա Նազարյանը 3,5 միավորով գրավեց 104-րդ տեղը:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկը, որը վաստակեց 8 միավոր: 2-րդ տեղը զբաղեցրեց ուկրաինուհի Աննա Ուշենինան (7,5 միավոր): 3-րդը ուկրաինացի Նատալյա Ժուկովան է (7 միավոր), որը լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնքան միավոր վաստակած Հարիկա Դոնավալիին ու Կատերինա Լահնոյին:

ՇԱՀԱԿՈՒՄ

# Եգիպտացիների վեցերորդ տիտղոսը

Եգիպտոսի ազգային հավաքականը պահպանեց Աֆրիկայի գավաթակրի տիտղոսը՝ 6-րդ անգամ նվաճելով պատվավոր մրցանակը: Եզրափակիչում եգիպտացի ֆուտբոլիստները հաղթեցին Կամերունի հավաքականին: Մրցանակի բախտը վճռեց հանդիպման 79-րդ րոպեին Աբուտրիկայի խփած միակ գնդակը:

Ի տարբերություն եզրափակիչ մրցախաղի, 3-րդ տեղի համար հանդիպումն այլի ընկավ արդյունավետ գոհներով: Մրցաշարի կազմակերպիչ Գանայի հավաքականը դարձավ բրոնզե մրցանակակիր՝ 4-2 հաշվով պարտության մատնելով Կոտ դ' Իվուարին: Այդ խաղում առաջինը հաջողության էին հասել գանացիները, սակայն մինչեւ ընդմիջում Կոտ դ' Իվուարի հավաքականը հաշվի մեջ առաջ անցավ (2-1): Վճռորոշ եղավ 2-րդ խաղակեսը, որում 3 անպատասխան գոլ խփելով, Գանայի ընտրանին շահեց հանդիպումը:

# Մարադոնան կրկին խաղադաշտ մտավ

Արգենտինյան ֆուտբոլի նախկին «աստղ» Դիեգո Մարադոնան օրերս կրկին խաղադաշտ դուրս եկավ: Նա բարեգործական խաղում Արգենտինայի հավաքականի կազմում հանդես եկավ Չիլիի ֆուտբոլիստների դեմ: Հանդիպումն անցկացվեց 42x22 մ խաղադաշտում: Յուրաքանչյուր խաղակես տեւում էր 25 րոպե:

Համառ պայքարում 11-10 հաշվով հաղթեցին Չիլիի հավաքականի ֆուտբոլիստները, որոնցից այլի ընկավ Իվան Սամորանոն: Ֆուտբոլասերները շատ ջերմ ընդունեցին Մարադոնային եւ անընդհատ նրա ազգանունն էին վանկարկում: Սակայն այդպես էլ Մարադոնային չհաջողվեց գոլ խփել, թեեւ գոլային 5 պահ ունեցավ:

Իսպանական լրատվամիջոցների հաղորդմամբ, Մարադոնան Չիլիում 6 օրվա ընթացքում 500 հազար դոլար էր ծախսել: Մինչեւ Չիլի ժամանելը, նա խնդրել էր իրեն եւ իր մերձավորներին ոստիկանների մի խումբ հատկացնել, որոնք պետք է ապահովեին անվտանգությունը:

# Ելենա Սոբոլեւայի համաշխարհային ռեկորդը

Մոսկվայում ընթացող թեթեւ atլետիկայի Ռուսաստանի ձմեռային առաջնությունում ռուսաստանցի Ելենա Սոբոլեւան 1500 մ վազքում մարզասրահների աշխարհի նոր ռեկորդ սահմանեց՝ ցույց տալով 3 ր՝ 58,05 վրկ: Նա բարելավեց իր իսկ համաշխարհային ռեկորդը (3.58, 28), որ սահմանել էր 2006-ի փետրվարի 18-ին, Մոսկվայում:

Վազքի սկզբում առաջատարի դերը սանձնել էր Յուլիա Ֆոմենկոն: Երբ մնացել էր հարթահարել 500 մ, Ֆոմենկոն ու Սոբոլեւան զգալիորեն առաջ էին անցել մրցակցուհիներից: Իսկ երբ վերջնագծին 150 մ էր մնացել, Սոբոլեւան առագաստեց վազքը, ուրջանցեց իր գլխավոր հակառակորդին ու դարձավ հաղթող՝ միաժամանակ բարելավելով ռեկորդը: Նշենք, որ նախորդ օրը նա Ռուսաստանի ռեկորդ էր սահմանել 800 մ վազքում:

Եվս մեկ ռեկորդ՝ եվրոպական, գերազանցվեց մրցումների ընթացքում: Մոսկվայի մարզի հավաքականը 4x800 մ փոխանցումավազքում գերազանցեց եվրոպական ռեկորդը (7 ր՝ 15,77 վրկ): Թիմի կազմում վերջին փուլում վազում էր 37-ամյա օլիմպիական չեմպիոն Յուրի Բորզակովսկին: Եվրոպական նախորդ ռեկորդը սահմանվել էր 1971-ին՝ ԽՍՀՄ հավաքականի կողմից (7.17,8):

# Բյոռնդալենի չեմպիոնական 10-րդ բարձունքը

Շվեդիայի էստերսունդ քաղաքում ընթացող բիաթլոնի աշխարհի առաջնությունում կրկին իր բարձրության վրա էր նորվեգացի հանրահայտ բիաթլոնիստ Ուլե Էյնար Բյոռնդալենը: 12,5 կմ դահուկավազքում նորվեգացի մարզիկը ցույց տվեց լավագույն արդյունքը՝ մրցաստանդությունը հաղթահարելով 31 ր՝ 04,5 վրկ-ում: Նա բավական դիպուկ էր նաեւ կրակագծում՝ ընդամենը 2 վրիպում թույլ տալով: Բյոռնդալենը 10-րդ անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Արծաթե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Մաքսիմ Տրետյակովը, որը Բյոռնդալենին զիջեց 10,1 վրկ-ով: 3-րդ տեղը գրավեց Գերմանիան ներկայացնող Ալեխանդր Վոլֆը:

# Բոլորից լավ աղրում են «Չելսիի» ֆուտբոլիստները

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները ներկայում բավական բարձր աշխատավարձեր ու պարգեւավճարներ են ստանում: Հետաքրքրական է, թե ինչպիսին է իրավիճակը եվրոպական ֆուտբոլային առաջատար հինգ երկրներում՝ Անգլիայում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում եւ Ֆրանսիայում: Այսքր կանդրադառնանք Անգլիային:

Ընթացիկ մրցաշրջանից անգլիական պրեմիեր լիգան կրկին ամենաթանկն է աշխարհում: Եվ դա շնորհիվ հեռուստատեսության հետ կնքած նոր պայմանագրի, որը տարեկան 900 մլն ֆունտ ստեռլինգից ավելի եկամուտ կապահովի: Այնպես որ, նույնիսկ հետնադասի թիմը, որը սահմանված կլինի հրաժեշտ տալ պրեմիեր լիգային, միայն հեռուստատեսությունից կստանա մոտ 30 մլն ֆունտ ստեռլինգ: Եթե սրան ավելացնենք նաեւ ֆուտբոլային խաղերի բարձր հաճախելիությունը եւ տոմսերի բարձր գինը, ակումբների խորհրդանշաններով ապրանքների ու մարզական հանդերձանքի վաճառքը, պիտի ասենք, որ անգլիական ակումբներում հանդես եկող ֆուտբոլիստները Եվրոպայում բոլորից բարձր են վարձատրվում:

Վերջին երեք մրցաշրջաններում պրեմիեր լիգայի ֆուտբոլիստների աշխատավարձի ընդհանուր հիմնադրամը մոտ 2 անգամ աճել է եւ հասել է 1 մլրդ ֆունտ ստեռլինգի: Դա հիմնականում պայմանավորված է խաղերի հեռուստահրավերից ստացված եկամուտի աճով: Քանի որ ակումբների եկամուտները շատ բանով պայմանավորված են մրցաշարային աղյուսակում նրանց գրաված դիրքով, ուստի դժվար չէ կռահել, որ դա ավելի շատ անդրադարձել է Անգլիայի առաջատար ակումբների՝ «Մանչեսթր Յունայթեդի», «Չելսիի», «Արսենալի» եւ «Լիվերպուլի» վրա: Օրինակ, անցյալ տարվա մայիսին նաեւ «Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարությունը միանգամից 4 անվարությունը դարձրեց իր առաջատար գոլ բարձրացրեց իր առաջատար խաղացող Քրիսթիանու Ռոնալդոյի աշխատավարձը: Ընթացիկ մրցաշրջանում պորտուգալացի ֆուտբոլիստը շաբաթական 52 հազար ֆունտ ստեռլինգ (տարեկան 2,7 մլն) աշխատավարձ է ստանում: Նրան մի փոքր զիջում է թիմի մեկ այլ «աստղ»՝ Ուեյն Ռունին:

Սակայն սխալ է կարծել, թե ամերիկացի միլիոնատեր Մալկոլմ Գլեյզերի կողմից «Մանչեսթր Յունայթեդը» գնելուց հետո թիմի ֆուտբոլիստները դարձան պրեմիեր լիգայում ամենաբարձր վարձատրվողները: Այս առումով Անգլիայում դժվար է մրցակցել «Չելսիի» հետ: Օրինակ, Եվրոպայում դեռեւս միայն հայտնի Բրանիսլավ Իվանովիչի տարեկան աշխատավարձը 2 մլն ֆունտ ստեռլինգ է: Անդրեյ Շեւչենկոն ու Միխայիլ Բալակը, որ «Չելսի» տեղափոխվեցին 2006-ին, տարեկան 6,5 մլն ֆունտ ստեռլինգ (շաբաթական 125 հազար) են ստանում: Թիմի ավագ Ջոն Թերրի շաբաթական աշխատավարձը 120 հազար ֆունտ ստեռլինգ է: Երկու տարի առաջ «Արսենալից» «Չելսի» տեղափոխված Էշլի Քոուլի շաբաթական վաստակը 30 հազարից հասել է 90 հազարի:

Իսկ ահա «Արսենալում» աշխատավարձերն այնքան էլ բարձր չեն: Նույնիսկ թիմի «գեղասդ» Թիերի Անրիի շաբաթական վաստակը չէր գերազանցում 78 հազար ֆունտ ստեռլինգը (տարեկան 4 մլն): Եվ հենց դա էր հիմնական պատճառը, որ ֆրանսիացի ֆուտբոլիստը նախընտրեց կրել «Բարսելոնի» մարզաշորթիկը: Աշխատավարձի չափով թիմային ռեկորդը պատկանում է ֆրանսիացի Պատրիկ Վիեյրային (շաբաթական 80 հազար): «Արսենալում» ներկայում ֆուտբոլիստների շաբաթական աշխատավարձը չի գերազանցում 60 հազար ֆունտ ստեռլինգը: Իսկ ահա «Լիվերպուլի» ավագ Սթիվեն Ջերարդը ստանում է 120 հազար ֆունտ ստեռլինգ: «Արսենալի» ղեկավարությունն այդ խնայողությունը բացատրում է նրանով, որ նոր մարզադաշտի շինարարության վրա ծախսել է 200 մլն ֆունտ ստեռլինգ: Ճիշտ է, այժմ 60 հազարանոց մարզադաշտն ավելի մեծ եկամուտ է ապահովում, քան նախորդը:

Պրեմիեր լիգայի մյուս ակումբների ֆուտբոլիստները համեմատաբար համեստ են ապրում: «Բիրմինգհեմի» կամ «Վեստ Հեմի» խաղացողների միջին աշխատավարձը 25-30 հազար ֆունտ ստեռլինգ է: Համեմատության համար նշենք, որ Մեծ Բրիտանիայում ոչ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվողների տարեկան միջին աշխատավարձն է այդքան կազմում: Այնպես որ, ֆուտբոլիստներն ունետրների շարքին են պատկանում:

# Կորի Սանդերսը թողնում է ռինգը

Գերծանր քաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն, հարավաֆրիկացի Կորի Սանդերսը հայտարարել է բոնցֆամարտին հրաժեշտ տալու մասին: 42-ամյա բոնցֆամարտիկը վերջերս արդեն առաջին ռաունդում նոկաուտի էր ենթարկվել ոչ այնքան հայտնի մարզիկ, ՀԱՀ-ի չեմպիոն Օսբորն Մաչիմանայից: Մենամարտից հետո նա նշել էր, որ թեեւ ցանկություն ունի շարունակել մարզումները, բայց այլեւս ֆիզիկական ծանրաբեռնվածություններին չի կարող դիմանալ: «Երբ խոսում էի Մայք Թայսոնի հետ, նա պատմեց, որ 41 տարեկանում իր համար դժվար էր մարզվելը եւ ամբողջությամբ նվիրվել պարապմունքներին: Նույնը կատարվում է նաեւ իմ հետ», նշել է Կորի Սանդերսը:

Բնականաբար, պարտությունը ցավալի հարված էր Սանդերսի հեղինակությանը, բայց ավելի վիրավորվեցուցիչ էր, երբ մենամարտից հետո մարզասերների մի մասը նրա հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տվեցին:

Հոդը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայաստանը՝ ակտիվ, Վրաստանը՝ պասսիվ գործընկեր

## *Տնտեսական հարաբերություններում գրեթե բոլոր հնարավորությունները՝ չօգտագործված*

«Հայաստան-Վրաստան տնտեսական հարաբերություններ. չօգտագործված հնարավորություններ» ուսումնասիրության երեկվա շնորհանդեսին ներկայացվեցին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում տեղական փորձագետների դիտարկումներն ու վերլուծությունը: Ինչպես տեղեկացրեց Հայաստանում ՄԱԿ-ի մշակական համակարգող, ՄԱԶԾ մշակական ներկայացուցիչ **Կոնստանտին Վիդալը**, ուսումնասիրության նպատակն է խթանել Հայաստանի եւ Վրաստանի տնտեսական համագործակցությունը՝ բարելավելով այս երկու երկրների առեւտրի, ներդրումների եւ տրանսպորտի ոլորտներում ձեւավորված հարաբերությունները:

Հետազոտական խմբի ղեկավար Տիգրան Զրբաչյանը ներկայացրեց ուսումնասիրությունը, տեղեկացնելով, թե, իր տվյալներով, նմանատիպ ուսումնասիրություն իրականացվում է նաեւ Վրաստանում: Ըստ Զրբաչյանի, հետազոտական խումբը փորձել է հասկանալ, թե բացի դարավոր բարեկամությունից էլ ինչն է կապում հայերին եւ վրացիներին: Ըստ այդմ, եթե Հայաստանից Վրաստան հիմնական ուղղվածությունը արտահանման արտահանումն է, ապա հակառակ ուղղությամբ ծառայություններն են՝ հիմնականում տրանսպորտային, տարանցման, զբոսաշրջության եւ այլն:

Հետաքրքրական է, որ Վրաստանից Հայաստան ծառայությունների ներմուծումը ամենից առաջ պայմանավորված է Վրաստանի աշխարհագրական դիրքով եւ Հայաստանի՝ շրջափակման մեջ գտնվելու հանգամանքով: Ամեն դեպքում, տնտեսական հարաբերությունների լուծ գնահատականի դեպքում ստացվում է, որ Հայաստանը ակտիվ գործընկեր է, մինչդեռ Վրաստանը՝ պասսիվ, որ հիմնականում օգտագործում է իր աշխարհագրական դիրքը: Այսինքն՝ Հայաստանը Վրաստանի հետ կապերի հիմնական բնագավառ է համարում արտաքին առեւտուրը, իսկ Վրաստանը Հայաստանին հիմնականում տրանսպորտ է տարանցիկ փոխադրման ծառայություններ:

Թվային արտահայտությամբ, 2006 թվականի տվյալներով, Հայաստանից Վրաստան արտահանումը կազմել է մոտ 54 մլն դոլար այն դեպքում, երբ Վրաստանից ներմուծումը՝ միայն 35 մլն: Եվ եթե Հայաստանից հարեւան երկիր են տարվում հիմնականում հանքահումային (հիմնականում ցինկոս) մթերքներ, բուսական արտադրանք, ապա Վրաստանից բերում ենք մեծաթիվ ոչարտասի սնունդ, քիմիական արտադրանք, փայտ:

Տարիների ընթացքում, ըստ Զրբաչյանի, մեծանում է Հայաստանից Վրաստան արտահանվող ապրանքների քանակը, որ 2006 թվականին կազմել է մոտ 300 անուն: Մինչդեռ Վրաստանից ներմուծվող ապրանքատեսակների քանակը միայն 105 է:

Հետազոտության արդյունքներով, Վրաստանից ծառայությունների արտահանումը 2006-ին կազմել է 146,77 մլն դոլար, ինչը մոտ երեք անգամ գերազանցում է Հայաստանից ապրանքների արտահանման ծավալները:

Ինչ վերաբերում է ներդրումներին, ապա թերեւս կարելի է ասել, որ Հայաստանն ու Վրաստանը «նախընտրում են» միմյանց հետ գործարար հարաբերություններ չունենալ: Այլապես դժվար է հանկանալ անմիջական հարեւանների համար ծիծաղելի թվերը, որոնք արտացոլում են ներդրումների ծավալը: Ամեն դեպքում, այստեղ էլ հավասարակշռվածության բացակայությունն ակնբախ է. Վրաստանում Հայաստանից 2006-ին արվել է մոտ 2 մլն դոլարի ներդրում, մինչդեռ Վրացական կողմից Հայաստանում ներդրվել է 21 հազար 200 դոլար:

Ինչպես, 1995 թվականից Հայաստանն ու Վրաստանը ազատ առեւտրի համաձայնագիր են ստորագրել, բայց պայմանները մնում են անհավասար: Եվ դա վերաբերում է ինչպես երկաթուղային փոխադրումներին, այնպես էլ ավտոմեքենաներով հաղորդակցությանը: Հետազոտությունն իրականացրած խումբը գտնում է, որ երկու երկրների միջեւ ընդհանուր տնտեսական գոտու ստեղծումը կնվազեցնի այլ՝ ավելի զարգացած երկրների կողմից Հայաստանի եւ Վրաստանի նկատմամբ առեւտրի սահմանափակումների կիրառումը:

Ուսումնասիրության արդյունքում հետազոտական խումբը կարծիք է հայտնել, որ Հայաստան-Վրաստան ազատ առեւտրի համաձայնագիրը իրականացվի՝ արտահանողներին առավել մեծ հնարավորություններ ընձեռման եւ երկկողմ կապերի հզորացման համար: Պետք է նվազեցնել, ասենք, երկու երկրների երկաթուղային սակագները, փոխադարձաբար վերացնել ճանապարհային տուրքերը եւ այլն:

Տիգրան Զրբաչյանի ներկայացմամբ, չնայած բաց երկրների հետ կրկնակի հարկումից խուսափելուն ուղղված համաձայնագիր ունի Հայաստանը, բայց Վրաստանի հետ նման համաձայնություն չի ստորագրվել: Բացի այդ, բարեփոխումներն ավելի ազատական են Վրաստանում, ինչը իր ժամանակին, ըստ Զրբաչյանի, հետ կթողնի Հայաստանին:

Մի հետաքրքրական հանգամանք եւս. Հայաստանն ու Վրաստանը սահմանակից են երկու երկրներում էլ, ըստ էության, ամենավատ վիճակում գտնվող շրջաններով: Վրացական կողմում ամենահետամնաց շրջանը Քվեմո-Քարթլին է, որից առանձնակի առաջ չէ Ջավախքը, հայկական Շիրակի, Լոռու եւ Տավուշի մարզերը եւս առաջադեմ չեն: Հայ-վրացական համագործակցության սահմանային հատվածում այս շրջանների միջեւ, ըստ հետազոտական խմբի առաջարկությունների, կարելի է տեսնել Վրաստանի կողմից հացահատիկային մշակաբույսերի ու անասնաբուծական ապրանքների, Հայաստանի կողմից կարտոֆիլի, բանջարեղենի, Տավուշից նաեւ մրգերի տեսքով:

Վրաստանի տրամադրած զբոսաշրջության, առեւտրի, տրանսպորտային ծառայությունների առնչությամբ եւս համագործակցության չօգտագործված հնարավորություններ կան: Մասնավորապես, Շիրակի եւ Լոռու հարեւանային վայրերից ափսառուժը կարող է օգտակար լինել ենթակառուցվածքների շինարարության մեջ:

Երկարաժամկետ կտրվածքում պետք է աղահանել երկու երկրների միջեւ ապրանքների ազատ առեւտուր, հետո նաեւ կարելի է ունենալ մաքսային միություն, ընդհանուր կովկասյան տուկա, բայց մինչ այդ անելիքները շատ են, իսկ կամարտահայտությունը՝ մոտ զրոյի:

ԱՂԱՆԵՆԻ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

# Համագործակցության համաձայնագիր

Բելգրադի Հանրապետության Պետական վերահսկողության կոմիտեի Ֆինանսական մոնիտորինգի դեպարտամենտի եւ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների միջեւ ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

Համաձայնագրի նպատակն է պատշաճորեն ամրագրել երկու կողմերի միջեւ տեղեկատվության փոխանակման փուլը, ինչպես նաեւ այլ ոլորտներում համագործակցության ու փոխօգնության մեխանիզմները, որոնք առավել մեծ հնարավորություններ կընձեռեն ֆինանսական ոլորտում հետախուզական աշխատանքների իրականացման եւ կասկածելի գործերի մասին տեղեկատվության առագ փոխանակման առումով:

Այս համագործակցությունը Հայաստանին թույլ կտա առավել արդյունավետ եւ կարգավորված զբաղվել հանցավոր եկամուտների օրինականացման ու ահաբեկչության ֆինանսավորման հակագրման գործունեությամբ:

ԿԲ մամուլի ծառայություն

*«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն*

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻՑ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԻՆ ԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սեմինար-խորհրդակցություններ ղեկավարների եւ հաշվապահների համար

*օրենսդրական պահանջներ, պարզաբանումներ եւ խորհրդատվություն, հարցերի պատասխաններ*

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն՝** Բաղրամյան 24դ, հեռ. 54-24-81, 54-74-81

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ո՞ւմ են ուզում տեսնել ՀՀ նախագահի պաշտոնում գողերը

Մի բան է, երբ «օրենքով գողերի» մասին գրում է հայոց մամուլը, եւ բոլորովին ուրիշ երանգներ են դրսեւորվում, երբ այդ թեմային անդրադառնում է օտարը, տվյալ դեպքում ռուսական մամուլը: Ահա եւ լայնորեն իրազեկվեց, որ Երեւանում ԱՊՀ երկրներից ու հեռավոր արտասահմանից օրենքով գողեր են հավաքվել՝ նշելու իրենց երբեմնի հեղինակությամբ՝ Սվո Ռաֆի մահվան տարելիցը եւ միաժամանակ անցկացնելու հանցահավաք: Իհարկե, հատուկ նշվում է, որ հանցահավաքի մասնակիցները գերազանցապես հայեր են, որ նրանք արդեն ունեն իրենց «սփյուռքը»՝ մոտ 40 հոգի (երեւի ազգային ավանդույթ է):

Ի դեպ, ինչքան առիթ է եղել ծանոթանալու մոսկվացի հայազգի միլիցիոներների հետ, բոլորին հարցրել եմ՝ ինչո՞ւ օրենքով գողերի «օրենքը» Հայաստանն ու Վրաստանն են, եւ ոչ մեկից խելոք գլխին բացատրություն չեմ ստացել: Ցասենք, թե տեղի թերթերն այս անգամ խորացել են այդ առեղծվածի մեջ: Ոչ, իհարկե: Այլ բուն հավաքի փաստի արձանագրությամբ, հերթական անգամ, հանգել են ընդհանրական ու չարախինդ հետեւության, այնուամենայնիվ, երեւական են կովկասյան ազգության անձինք:

Նաեւ պարզվում է, որ ներկա երեւական հանցահավաքը սոսկ «տարելիցային» իրադարձություն չի եղել, այլ դրսեւորել է նոր որակ եւ կրել... քաղաքական բնույթ. մասնակիցները քննարկել են իրենց կողմնորոշումները եւ նախընտրությունները Հայաստանի նախագահի ընտրության հարցում:

Ավագ, լրատվամիջոցներից եւ ոչ մեկն ընդունակ չի եղել պատասխանելու ամենահետաքրքրական հարցին՝ հայոց ղեկավարի թեկնածուներից ո՞րն է նրանց կողմից ամենահարգվածը կամ ամենացանկալին: Ազգային պատմության մեջ եղավ մի ժամանակ, երբ այդ երեւական տարը նախկին ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանի ջանքերով ֆիզիկապես արտաքսվեց Հայաստանից: Բայց հիմա պարզվում է, որ այդ «ինստիտուտը» կրկին վերաբացվել է Երեւանում եւ անարգել շարունակում է կադրերի վերարտադրությունը: Ընդսմին, ինչպես ասվեց, նոր հավելանոց մակարդակով՝ տվյալ դեպքում ազդել նախագահական ընտրությունների վրա:

Ռուսաստանում նշում են, որ այդ կարգի հանցագործների դեմ պետականորեն պայքարում են իրենց երկրում, Վրաստանում, Իտալիայում եւ Ամերիկայում: Գուցե դրա համա՞ր է հանցահավաքը տեղի ունենում Երեւանում: Խորհրդային տարիներին նման պարագաներում հարցնում էին՝ ո՞ր է նայում միլիցիան: Հիմա երեւի պետք է հարցել՝ ո՞ր է նայում ազգային ոստիկանությունը...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Մոսկվա

# Ջեկ Գեւորգյանը ուսանողների առաջ

Դեպրյթից «Սստրեյթեդ պրեսի» թղթակից Ջորի Ուիլյամսը «Արմինյն միրոր սփեթթերում» գրում է, որ բանից ազատ արձակվելուց վեց ամիս հետո «մահվան բժիշկ» հորջորջված Ջեկ Գեւորգյանը գտնում է, որ ինքը ճիշտ է վարվել օգնելով անբուժելի հիվանդություններով տառապող հիվանդներին կնքել իրենց մահկանացուն:

Ելույթ ունենալով Դեպրյթի «Ուեյն» եւ Գեյնվիլի «Ֆլորիդա» համալսարանների ուսանողների առաջ՝ 79-ամյա թոքաբանն ափսոսաքը իրեն հատուկ հումորով ներկայացրել է ինչպես Ամերիկայի կառավարությանը, այնպես էլ դատական համակարգը, որին անվանել է «անգամնիվ եւ կոռումպացված»: Նա կոչ է արել բանտային բարեկարգումներ իրականացնել: Անդրադառնալով սահմանադրության 9-րդ բարեփոխված հոդվածին, նա կարեւորել է պայքարը հոգուս մարդու իրավունքների պաշտպանության: «Օրենքները իրավունքներ չեն պարգեւում, այլ միայն խոչընդոտ են այդ իրավունքներից օգտվելու հարցում», ասել է նա:

Ուսանողները բուռն ծափերով են ընդունել նրա ելույթները:

Հ. Ծ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ սույն թվականի փետրվարի 07-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացվել Կանոնադրության եւ «Դիտորդ խորհրդի եւ դիտորդ խորհրդի նիստերի մասին կանոնակարգում» փոփոխությունները:

Վերոհիշյալ փաստաթղթերը տեղակայված են «www.cba.am/Արժեթղթերի շուկա /Կարգավորում /ԻԿԿ փաստաթղթեր /Գրանցման ներկայացված կանոններ/Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» կայքում:

ԿԲ մամուլի ծառայություն

## ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմը ցավակցում է *Արմեն Մելիք- Իսրայելյանին՝* մոր

**Ելիզավետա Մելիք- Իսրայելյանի**

մահվան կապակցությամբ:

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 11.02.2008 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 309.63 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 449.37 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 12.49 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 196.34 |

ԳՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱԵԳԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Գանձակեցոցի 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անջիթեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 11.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արաքելյաց 2: